

16 777

323.1(47)

17-49

Ա. ԴԻՄԱՆՇՏԵՅՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ

ՅԵՎ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

323.1(47)
Դ-49

ԽԱՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ԿԵՆՏՐ, ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1930

523.1 (47)

7-49

10 3 APR 2013

Ա. ԴԻՄԱՆՇԵՅՆ

175 JAN 2010

26 SEP 2006

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ

Յ Ե Վ

ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԶԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

3871 1008 37573

3871

Ա. Մ.

10629



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1930

Ընկերներ, սույն զեկուցումը* հանդիսանում է իմ անցյալ տարվա աշատեղ կարգացած զեկուցման շարունակությունը: Յես կանգ կառնեմ ազգային կուլտուրայի ընդհանուր պրոբլեմի, նրա զարգացման տեղեկությունների, կուլտուրական շինարարության և կուլտուրական հեղափոխության ընդհանուր խնդիրների վրա, և, մասնավորապես, ազգային հանրապետությունների դպրոցական շինարարության հարցերի վրա:

Դնելով ազգային կուլտուրայի և կուլտուրական հեղափոխության հարցը, մենք նախ և առաջ պետք է պարզ բնորոշենք մեր քննության ոլորտը, — թե ի՞նչ ի նկատի ունենք՝ խոսելով կուլտուրայի մասին, — նյութական կուլտուրան թե այսպես կոչված «հոգևոր» կուլտուրան: Նյութական կուլտուրայի վրա յես այստեղ առանձնապես կանգ չեմ առնելու: Յես այդ մասին խոսել եմ իմ անցյալ զեկուցման մեջ, ուր ցույց եմ տվել, վոր նյութական կուլտուրայի բարձրացման գործում մեր ազգային հանրապետություններում խոշոր նվաճումներ են կատարված, վորոնք զերազանցում են ընդհանուր կուլտուրայի նվաճումներին (թեև չի կարելի ժխտել և այն խոշոր նվաճումները, վոր կան վերջինիս ասպարիզում): Յես ուզում եմ կանգ առնել գլխավորապես այն կուլտուրայի վրա, վորը կապված է կենցաղի, սովորույթների, ունակությունների, իդեաների հետ, այն կուլտուրայի վրա, վորը ձևակերպվում է ժողովուրդների մեջ նրանց զարգացման ամբողջ ընթացքում: Յեվ յեթե մենք այս տեսակետից մոտենանք ազգային, և հատկապես արևելյան հանրապետություններին, ապա այդ ասպարիզում կունենանք հսկայական դժվարություններ:

Մենք սովորել ենք մեր հաշիվներն անելիս հիմք ընդունել վորոշ տոկոսների համեմատությունը նախապատերազմյան թվերի հետ: Յեվ յերբ մենք այս չափանիշով ենք մոտենում մեր ազգային հանրապետությունների մեծ մասին, ապա համեմատությունը շատ դժվարանում է, վորովհետև այդ տեղերում մենք համարյա թե չենք գտնում կուլտուրա այն իմաստով, ինչ իմաստով վոր մենք հասկանում ենք հիմա: Յեթե վորևե տեղ կար կուլտուրա, ապա դա «հոգևոր» կուլտուրա յեր, կղե-

* Կարգացված է Կոմունիստական Սկադեմիայում:

բական-կրոնական կուլտուրայի իմաստով: Խորհրդային կուլտուրան դեռևս չուր սաղմային դրութեան մեջ եր գտնվում: Վերցնենք, որին նաև, Միջին Ասիան: Ամբողջ Միջին Ասիայում նախապատերազմյան շրջանում հիմնական ազգաբնակչության համար կարմիրյան 30 գաղութներ կուլտուրայի ցուցանիշ դա մի առանձին լուրջ բան էի կարելի համարել: Բացի այդ, յեթե մենք այդ վայրերում ունեցել ենք վորոշ չափով աշխարհիկ կուլտուրա, ապա դա խոշոր չափով կրել է գաղութային բնույթ. կային մի քանի ուսուցչական սեմինարիաներ, վորտեղ ուսումնասիրում էին ուսուց լեզուն և աշխարհիկ առարկաներ: Բայց այդ սեմինարիաները նպատակ ունեյին վնջ թե ընդհանրապես պատրաստել կուլտուրական մարդիկ, այլ այնպիսի ուժեր, վորոնք ընդունակ լինեյին ազգաբնակչության վզին փաթաթել ոտար կուլտուրան, վորը նրան անծանոթ եր և վոչ մի կերպ էր համապատասխանում նրա պահանջներին:

Նրա համար ել յես ամենից առաջ և ամենից շատ կանգ կառնեմ մեր սոցիալիստական ժամանակաշրջանի զարգացման վրա: Այստեղ նախապես պետք է նշել, վոր էի կարելի ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին միատեսակ մոտեցում հայտնաբերել, իբրև յետաձգ կատեգորիայի: Մի քանի ժողովուրդներ, ինչպես վրացիները, հայերը և ուրիշները, ունեյին բավական բարձր կուլտուրա, վորը վորոշ չափով ուներ նույնիսկ հեղափոխական տրադիցիաներ, — թեև ամենից շատ գոնավորված եր ազգայնականութամբ: Ի նկատի ունենալով այդ ժողովուրդների համեմատական սակավաթվությունը և տեական ազգայնական հալածանքը, կարելի յե նրանց կուլտուրան դնել առաջնակարգների շարքերում: Բացի այդ, յետաձգ ժողովուրդների շարքերում կային յետաձգացության զանազան աստիճաններ, վորոնք մասամբ պայմանավորված էյին այդ ժողովուրդների պատմական անցյալի տարբերությամբ և մասամբ ել ցարական ռեժիմի ճնշման աստիճանների տարբերությամբ:

Սակայն նախապես պետք է կանգ առնել ազգային կուլտուրա տերմինի բնորոշման վրա, վորը թեև մեր պրակտիկայում ստացել է քաղաքացիության իրավունք, բայց, ինչպես գիտեք, ազատ է վիճելի մոմենտներից: Հայտնի յե Վահանյանի կտրուկ յեկույթը այն բովանդակության դեմ, վորը կուսակցությունը տալիս եր Խորհրդային Միության շրջանակներում ծավալվող ազգային կուլտուրային: Վահանյանի հայացքները կրկնվում էյին տրոցկիստական ոպողիցիայի ընդհանուր պլատֆորմում: — Այդ հայացքները այժմ յուրացրել է մի ամբողջ հակակուսակցական հոսանք: Վահանյանը իր վերաբերմունքը դեպի ազգային կուլտուրան ձևակերպում եր շատ կարճ. — «Ազգային

կուլտուրան թունավոր հարց ե, դա վատ հիվանդություն ե» (Վահանյան — «О национальной культуре» էջ 154): Նա կարծում ե, վոր ազգային կուլտուրայի հարցը, — դա նացիոնալիզմի հարցն ե, նույնիսկ անասնական ազգայնականության թագցումն ե, — այս մտքի պաշտպանությանն ե նվիրված նրա բավականին սովոր գիրքը, բայց այնտեղ բացակայում է պրոլետարական դիկտատուրայի անցողիկ ժամանակաշրջանի կուլտուրայի զարգացման մարքսիստական վերլուծությունը և այն իրական պրոցեսների ըմբռնումը, վորը նկատվում է ազգային հանրապետությունների կուլտուրայի զարգացման մեջ. նա բավականանում է միայն այդ կուլտուրայի զարգացման պրոցեսում նկատված բացասական կողմերի մեջբերումներով: Վահանյանի հիմնական հակաճառությունը հանգում է նրան, վոր պրոլետարիատը չունի իր դասակարգային կուլտուրան: Պրոլետարիատի ստեղծած կուլտուրան, — դասակարգի կուլտուրան ե, բայց յերբեք դասակարգային: Տարբերությունը կայանում է նրանում, վոր դասակարգային կուլտուրան ստեղծում է մանր-բուրժուական ինտելիգենցիան ի դիմաց այն մասնագետների, վորոնք գործում են թե նյութական և թե հոգևոր կուլտուրայի ուղղությամբ: Իսկ պրոլետարիատի կուլտուրան ստեղծում է դասակարգն ամբողջությամբ իր պայքարի պրոցեսում, առանց աշխատանքի բաժանման իդեոլոգիաների և մասսայի մեջ: Իսկ հիմնական տարբերությունը կայանում է նրանում, վոր բուրժուական կուլտուրան ձգտում է հավերժացնել իր դասակարգի տիրապետությունը, իսկ պրոլետարիատն լընդհակառակը ձգտում է դասակարգերը վոչնչացնել: Յեկնելով այս դրությունից, Վահանյանը պնդում ե, վոր ազգային կուլտուրան ամեն պայմաններում ունի բուրժուական կուլտուրայի բոլոր հատկանիշները, բայց յերբեք պրոլետար դասակարգի կուլտուրայի հատկանիշը:

Առայժմ կանգ չառնելով Վահանյանի պնդումների ամբողջական անալիզի վրա, — վորի մասին մենք կխոսենք, յերբ կքննենք ազգային կուլտուրայի առանձին բաղկացուցիչ մասերը, — ցույց կտանք, վոր հիմնականում Վահանյանը արձածում է Տրոցկու մտքերը, վորը պնդում եր, թե պրոլետարական կուլտուրա չկա, քանի վոր պրոլետարիատը դեռ էի ստեղծել այն, իսկ մինչև ստեղծելը — նա իբրև դասակարգ կվոչնչանա՝ հասնելով սոցիալիստական անդասակարգ հասարակակարգին: Փակագծի մեջ պետք է նկատեմ, վոր այս թեորիան, վորոշ չափով կապված է մի յերկրում սոցիալիզմ կառուցելու տրոցկիստների հայտնաբերած անհավատության և անհանրինության հետ, վորովհետև նա յենթադրում ե, վոր պրոլետարական դիկտատուրայի անցման շրջանը շատ կարճ է լինելու, և այդ կարճ ժամանակամիջոցում

կուլտուրական շինարարութեան ասպարիզում վորեւ լուրջ դործ չի կարելի ստեղծել:

Ավելի հեշտ բան չկա, քան վերցնել ավստրո-մարքսիստների հարցադրումը ազգային կուլտուրայի մասին ազգային հարցում և այն ներկայումս վերագրել մեզ, կշեռքի թաթից դեն գցելով իշխանութեան գլուխ անցած նոր դասակարգի նշանակութունը, վորը հիմնականում փոխեց ուժերի փոխհարաբերութիւնը և նրանց նշանակութիւնը դասակարգային հասարակարգում, — ինչպէս այդ անում է Վահանյանը, ամբողջովին անտես առնելով ԽՍՀՄ ազգութիւնների պատմական և աշխարհագրական դրութիւնը՝ համեմատած հին Ավստրիայի հետ: Բառերի կարծիքով, «գյուղացին չեւ մասնակցում այն բոլորին, ինչ վոր միացնում եր ազգութեանը... ազգութեանը պահպանվում է միայն կուլտուրայի հաղորդակցութեամբ, վորպիսին սահմանափակվում է տիրող դասակարգի շրջանակում, ժողովրդական լայն մասսաները զրկված են նրանից...», ժողովրդական լայն մասսաները չեն պատկանում ազգութեան, վորը հնարավոր է միայն կուլտուրայի ընդհանրութեամբ. նրանք վոչ այլ ինչ են, քան հիմք, վորի վրա կառուցվում է ազգութեանը...»: Վահանյանը Բառերի այս պնդումները, վորը վերաբերում է Ֆեոդալական ժամանակաշրջանի կուլտուրային, մեջ է բերում իբրև հիմնավորում մեզ վրա հարձակվելու իմ կարծիքով բավական եր սահմանափակվել Լենինից վերցրած մի քանի քաղվածքներով, վորոնցում խիստ կերպով հարվածվում է «ազգային կուլտուրան», վորպեսզի ազգային կուլտուրայի նշանակութիւնը բուրժուական հասարակարգում ամեն մի բոլորիկի համար պարզ դառնա: Կարդանք նրանցից մի քանիսը, — «բոլոր ազգերի բուրժուական, թե Ավստրիայում և թե Ռուսաստանում «ազգային կուլտուրա» լոգունդի տակ գործնականում բանվորներին բաժանում է իրարից, թուլացնում է դեմոկրատիան, առևտրական ձեռնարկներ է կատարում ճորտատերերի հետ ժողովրդի իրավունքները և ժողովրդի ազատութիւնը վաճառելու համար. բանվորական դեմոկրատիայի լոգունդը «ազգային կուլտուրա»-ն չէ, այլ դեմոկրատիայի ինտերնացիոնալիստական կուլտուրա և համաշխարհային բանվորական շարժումը» (Լենին, հատ. XIX, էջ 50): Կամ ավելի ցայտուն քաղվածք Լենինի 1913 թ. ազգային հարցի առթիվ գրած թեզիսներից, վորը հրատարակված է միայն նրա մահվանից հետո XX (էջ 417) լրացուցիչ հատորում, ուր ասված է. — «Սոցիալ-դեմոկրատիայի տեսակետով վոչ ուղղակի, և վոչ ել անուղղակի կերպով անթույլատրելի չէ ազգային կուլտուրայի լոգունդը: Այդ լոգունդը ճիշտ չէ, քանի վոր հենց կապիտալիզմի որոք մարդկութեան ամբողջ տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքը ավելի ու ավելի միջազգայ-

նացման է յենթարկվում: Սոցիալիզմը դա ամբողջութեամբ միջազգայնական կղարձնի: Ներկայումս արդեն բոլոր յերկրների բանվորների կողմից սխտեմատիկաբար ստեղծվող ինտերնացիոնալիստական կուլտուրան յուրացնում է վոչ թե «ազգային կուլտուրան» (ինչ ազգային կոնկրետի էլ ուղում է լինի) ամբողջութեամբ, այլ ամեն մի ազգային կուլտուրայից բացառապէս վերցնում է նրա հետևողական-դեմոկրատական և սոցիալիստական ելեմենտները»: Այստեղ բավական պարզորոշ կերպով յերևան են գալիս Լենինի հայացքները ազգային կուլտուրայի մասին: Յեւ այնուամենայնիւ հատկապէս շնորհիւ Լենինի բացատրութեան, մենք համոզվում ենք, վոր կուսակցութեան ներկա գիծը խորհրդային ազգային հանրապետութիւններում ազգային կուլտուրայի վարդապետական վերաբերյալ ամբողջովին լենինյան է, և վոր «ազգային» կուլտուրայի լոգունդը դարձել է պրոլետարիատի լոգունդը», վորը ըլխում է խորհրդային իշխանութեան առանձնահատկութիւնից, — և ընկ. Ստալինը այդ խնդրի առթիւ արեւելյան ժողովուրդների համալսարանում ունեցած իր հայտնի յեկույթում միանգամայն իրավացի յեր:

Ընկերներ, այս հարցը պետք է քննել Լենինի գրածների հիման վրա, հիշելով, վոր լենինիզմը դոգմա չէ, այլ՝ գործողութեան մեթոդ: Նախապէս պայմանավորվենք, իբրև միմիում, վոր մեր ազգային հանրապետութիւններում խորհրդային իշխանութեան որոք այնուամենայնիւ գոյութիւն ունի հետևողական դեմոկրատիա (կարծում եմ, վոր նույնիսկ ինքը, Վահանյանը, յեթե նա այստեղ լիներ, չեր վիճի այդ միմիումի դեմ, վորովհետեւ իրականութեան մեջ մենք այնտեղ ունենք մի քիչ ավելին, այն է պրոլետարական դիկտատուրա և նրա հետ կապված պրոլետարական դեմոկրատիա): Վերը բերած Լենինի ցիտատներից մենք արդեն ազգային կուլտուրան ի նկատի ունենք իբրև ինտերնացիոնալիստական կուլտուրայի բաղկացուցիչ մի մասը, վորն իր մեջն է ամփոփում ազգային կուլտուրայի պրոգրեսիվ տարրերը: Լենինը գրում եր, վոր «Ամեն մի ազգային կուլտուրայում կան, թեև չզարգացած, բայց դեմոկրատական, սոցիալիստական կուլտուրայի տարրեր... Սակայն ամեն մի ազգութիւն ունի նաև բուրժուական կուլտուրա (իսկ մեծ մասամբ նաև սև-հարյուրակային և կղերական), վոչ իբրև «ելեմենտ», այլ իբրև իշխող կուլտուրա: Դրա համար ել «ազգային կուլտուրան» ընդհանրապէս կալվածատերերի, տերտերների ու բուրժուազիայի կուլտուրան է»: Այս դրութիւնները կիրառելով մեր պայմաններում, — ինչպէս սխալ կերպով անում է այդ Վահանյանը, — պետք է հասկանալ Մարքսի դիալեկտիկայի հիմունքները, վորի համաձայն «գերիշխող մտքերը ներկայացնում են վոչ այլ ինչ, յեթե վոչ իշխող նյութական փոխհարաբերութիւնների իդեալա-

կան արտահայտութիւններ, այսինքն հարաբերութիւններ, վորոնք մի-
միայն մի դասակարգին են դարձնում տիրապետող, այսինքն նրա
գերիշխանութեան մտքերն են արտահայտում: Անհատները, վորոնք
ներկայացնում են տիրող դասակարգը, մի շարք այլ բաների հետ,
տիրապետում են նաև գիտակցութեանը ու հետեւեալ մտածում են:
Դրա համար ել ինքնըստինքյան հասկանալի յե, քանի վոր նրանք իշ-
խում են իբրև դասակարգ եւ բնորոշում են վորեւ պատմական ժամա-
նակաշրջանի բովանդակութիւնը, — նիւնք այդ անում են իրենց ամ-
բողջ ելութեամբ, — այսինքն տիրապետում են ի միջի այլոց իբրև մտա-
ծող մարդիկ, իբրև մտքերի արտադրողներ, կարգավորելով արտադրու-
թիւնը եւ տարածելով իրենց ժամանակի մտքերը, եւ, նշանակում եւ,
նրանց մտքերն ել հանդիսանում են գերիշխող տվյալ ժամանակա-
շրջանի մտքերի» («Մարքսի եւ Ենգելսի Արխիվ» I, էջ 230):

Յերբ Լենինը գրում եր ազգային կուլտուրայի մասին, իբրև
կալվածատիրականի եւ բուրժուականի, այդ դասակարգերը հանդիսա-
նում եյին գերիշխողը եւ նրանց մտքերը բնորոշում եյին ժամանակա-
շրջանի կուլտուրայի բովանդակութիւնը: Վոչ վոր չի համարձակվի ասե-
լու, վոր ԽՍՀՄ-յան մեջ, պրոլետարական դիկտատուրայի որոք, կարող ե
տեղ գտնել այդպիսի, կամ դրա նման ազգային կուլտուրա: Մենք
ունենք պրոլետարական կադրեր, վորոնք իրենց յետեւից տանում են
ազգային հանրապետութիւններին. նրանցում նույնպես կան զգալի
չափով պրոլետարական շերտեր, վորոնք այնտեղ հանդիսանում են
տիրապետող դասակարգը: Իսկ վորտեղ բանվորները քիչ են, մենք
այնուամենայնիվ ունենք հետևողական չքավորական-բատրակային դե-
մոկրատիա, վորը, ինչպես ասված ե, ըստ Լենինի, հանդիսանում ե
ազգային կուլտուրայի ընդունելի մասնիկը: Խորհրդային հանրապե-
տութիւնների ազգային կուլտուրայի անվան տակ մենք հատկապես
հիմա հասկանում ենք կուլտուրայի այն ծավալն ու բովանդակու-
թիւնը, վորը ստեղծվում ե ազգութիւնների մեջ կոմկուսակցութեան
դեկավարութեամբ, այսինքն միանգամայն այլ «գերիշխող անձնավորու-
թիւնների» կողմից, վորոնք բնորոշում են Խորհրդային Միութեան
մեր ժամանակաշրջանի գերիշխող միտքը: Նա փաստակար եր մինչ
պրոլետարական հեղափոխութիւնը, ե հեղափոխական ե այժմս:

Իբրև որինակ այն բանի, թե ինչքան ե մեզ անհրաժեշտ կիրա-
ռել դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը ազգային հարցը լուծելիս,
հաշվի չառնելով արտաբան, թերեւ ե սկզբունքային լուծումը, կհեն-
վիմ ընկ. Ստալինի հոգովածից մի քաղվածքի վրա, կարծեմ՝ քչերին ծա-
նոթ, գրված 1920 թ., ազգութեանը իբրև ինքնուրույն պետութիւն
առանձնանալու իրավունքի հարցի մասին: Ահա թե մենք ինչ ենք

կարդում այնտեղ. — «Կարող ե տարրինակ թվալ, վոր իմ հոգովածը
վճռականորեն ժխտում ե ծայրամասերի՝ Ռուսաստանից անջատվելու
պահանջը, իբրև հակահեղափոխական հերյուրանք: Բայց ըստ ելութեան
այդտեղ վոչինչ տարրինակ բան չկա: Մենք կողմնակից ենք
Հնդկաստանի, Արաբիայի, Յեգիպտոսի, Մարոկկոյի ե այլ ազգութիւնների՝
Անտանտայից բաժանվելուն, քանի վոր այս դեպքում անջատվելը
կնշանակե այդ ձնշված ժողովուրդների ազատագրումը իմպերիալիստ-
ներից, իմպերիալիզմի դերքերի թուլացումը ե հեղափոխական դիր-
քերի ուժեղացումը: Մենք դեմ ենք ծայրամասերի անջատմանը Ռու-
սաստանից, վորովհետեւ այս դեպքում անջատումը կնշանակե ծայրա-
մասերի ստրկացումը իմպերիալիստներին, Ռուսաստանի հեղափոխական
գորութեան թուլացումը ե իմպերիալիստների դիրքերի ամրապնդումը...
Պարզ ե, վոր անջատման հարցը կախումն ունի միջազգային կոնկրետ
պայմաններից, կապված ե հեղափոխութեան շահերի հետ»: («Հոգովածների
ժողովածու», էջ 7): Այսպիսով անջատման իրավունքի լոգունգը, վորը հե-
ղափոխական եր մինչ Ռուսաստանի հեղափոխութիւնը, նրանից հետո
գործնականորեն ժխտվում ե, իբրև հակահեղափոխական ձգտում: Նման
դիալեկտիկական զարգացում, բայց հակառակ ուղղութեամբ, ունե-
ցավ նաև ազգային կուլտուրայի ըմբռնումը:

Դառնանք կրկին Խորհրդային Միութեան պայմաններում ազգա-
յին կուլտուրայի զարգացման կոնկրետ ետապներին պարզաբանմանը,
ե տեսնենք այն եվոլյուցիան, վորը մենք կատարեցինք հեղափոխու-
թիւնից հետո ազգային կուլտուրայի ըմբռնման հարցում նրա առան-
ձին յերանգների վերաբերյալ: Ինքն ըստ ինքեյան հասկանալի յե, վոր
ներկայումս ազգային կուլտուրայի ըմբռնումը մեղանում ընդունել ե
բոլորովին նոր իմաստ: «Ազգային կուլտուրայի» հին իմաստը իր
նշանակութեանը պահպանել ե միայն մեր Միութեան սահմաններից
դուրս: Մենք, գործադրելով այդ տերմինը, դնում ենք նրա մեջ բոլո-
րովին այլ բովանդակութիւն: Մենք արդեն Լենինից բերինք մի քանի
ցիտատ, ուր նա բավական կտրուկ կերպով դեմ ե խոսում ազգային
կուլտուրային ու նրա զարգացմանը՝ նրա հին իմաստով: Պետք ե նշել
մի մոմենտ, վորը հատուկ լույս ե սփռում «ազգային կուլտուրա»
իմաստին մեր պայմաններում ե նախահեղափոխական ժամանակա-
շրջանում: Այն ժամանակ ամենաշատ ձնշված ազգութիւններում, ստո-
րին դեմոկրատական դասակարգի կուլտուրան շատ յետաձգեց եր:
Կուլտուրան յեղնում եր բուրժուազիայի հետ կապված ավելի ունեոր
շրջանակներից: Դեմոկրատական կուլտուրա համարյա չկար, կամ շատ
թույլ եր: Բացի այդ, այն կուլտուրան, վորը հրամցվում եր ավելի
յետաձգեց ազգութիւններին, փոխ եր առնվում դրացիներից, — ավելի

ազատ, կամ, ավելի ճիշտ՝ զարգացած ժողովուրդներից. նա լցված եր բուրժուական իդեոլոգիայով, իսկ հաճախ եւ թունդ ազգայնական եր: Ահա թե ինչու Լենինը խոսում եր ազգային վաանդավորութեան մասին, նաեւ ճնշված ազգութեանների կուտուրանների վերաբերյալ: Նրանց շրջանում եւ մասսայի կուտուրական կյանքի իդեոլոգիական ղեկավարութեանը պատկանում եր իշխող տարրերին, վորոնք շաղաղված եյին ազգային եւ բուրժուազիայի դասակարգային իդեոլոգիայով:

Այն ազգային կուտուրայի վերաբերյալ, վորը ներկայումս մենք ծավալում ենք, նախ եւ առաջ պետք ե հարց դնել, թե վոր տարրերի համար ե նա կանխորոշված: Յերբ նոր պայմաններում մենք հարց ենք դնում ազգութեանների կուտուրական զարգացման մասին, ապա նախ եւ առաջ մենք ի նկատի ունենք ազգաբնակչութեան լայն մասսաները: Ներկայումս ազգային կուտուրայի ծավալումը ավելի շատ գնում ե ընդարձակման, քան խորացման ուղղութեամբ: Մենք հիմա ամեն կերպ ձգտում ենք ավելի ու ավելի լայն մասսաներին ներգրավել դեպի կուտուրան: Բացի այդ, այն կուտուրան, վորը մենք ծավալում ենք հիմա, անցյալի համեմատութեամբ փոխ ենք առնում ուրիշ աղբյուրից, նրա յեղման կեաը այլ ե, համեմատած նախապատերազմյան շրջանի կուտուրայի հետ: Նախապատերազմյան շրջանում, այն կուտուրան, վորը հրամցվում եր մասսաներին, համապատասխանում եր տվյալ ազգութեան շահագործողների կամ ընդհանրապես տիրող դասակարգերի շահերին: Այդ կուտուրան ընդհանրապես ամփոփված եր մի քանի ֆորմալ գիտութեաններում, վորոնք անհրաժեշտ եյին շահագործողների արտադրողականութեան բարձրացման համար, մի շարք գեղարվեստական արտադրութեաններում, — սովորաբար դասակարգայնորեն խորթ ստորին դասակարգի համար, — վորոնք իդեալականացնում եյին տերերին ե նրանց կյանքը, մարդասիրական բնույթի գրականութեան մեջ ե այլն: Մասսային պատվաստում եյին կրոնական ցնորքներ ե ազգայնական իդեաներ: Դպրոցները մասսային դասակարգայնորեն խորթ եյին: Այն կուտուրան, վորը մենք ենք տալիս մասսային, բոլորովին այլ բնույթ ունի: Ի՞նչ ենք մենք սովորեցնում մասսային: Մենք սովորեցնում ենք, վոր մասսան հասկանա տնտեսական ու քաղաքական այն փոխհարաբերութեանները, վորոնք գոյութեւն ունեն դասակարգային հասարակակարգում: Մենք տալիս ենք վրձնի միայն բնադիտական ե մատեմատիկական գիտութեաններ, — մասսան պետք ե բավական խորը թափանցի հասարակական փոխհարաբերութեանների ըմբռնման հարցերում, պետք ե ուսումնասիրի նաեւ արտադրութեան հետ կապված հարցերը, ծանոթանա իր ե հասարակութեան տնտեսութեան բարձրացման խնդիրների հետ: Մեր կուտուրան ե դպրոցները ձգտում են

նրան, վոր ոժանդակեն լայն մասսաների դիտական մակարդակի ե աշխատանքի արտադրողականութեան բարձրացմանը, վորպեսզի այդ բոլորը անմիջապես կիրառվեն պրակտիկայում: Այն կուտուրան, վորը գնում ե ավտոնոմ շրջանների ե հանրապետութեանների ազգութեանների մեջ, հանդիսանում ե ազգային կուտուրա հատկապես նրա համար, վոր նա հարմարվում ե այն առանձնահատուկ կենցաղային, աշխարհագրական, կլիմայական ե այլ պայմաններին, վորում ապրում ե տվյալ ազգութեան մասսան:

Պետք ե ասել, վոր «Ազգային կուտուրա» խոսքը ավելի համապատասխանում ե կուտուրայի այն ընդհանուր գաղափարին, վոր (կուտուրան) անց ե կացվում Խորհրդային Միութեան ազգային հանրապետութեանների մեջ: Դա ամենին չի նշանակում, վոր ամեն մի հանրապետութեւն, ամեն մի ժողովուրդ կամ ազգութեւն պետք ե շարունակ ընդգծեն ազգային բովանդակութեւնը այն կուտուրայի, վոր իրենք զարգացնում են: Այդ հանրապետութեանները իրենց յերկրում կարող են շեշտել այնտեղ տարվող կուտուրայի սոցիալիստատական բովանդակութեւնը: Միևնույն ժամանակ բացարձակ վճռականութեամբ նրանք պիտի ընդգծեն դեռեւս համարյա ամենուրեք գոյութեւն ունեցող տեղական ազգայնական վոգու դեմ մղվող պայքարը ե ճիշտ մեկնութեւն տան այն հանգամանքին, թե մենք ինչպես ենք զարգացնում ազգային կուտուրան:

Մենք այդ կուտուրան անվանում ենք ազգային նրա համար, վոր նա, շնորհիվ մեր Խորհրդային սիստեմի, հարմարվում ե այն սպեցիֆիկ պայմաններին, վորոնք ստեղծել են տվյալ ազգութեան ռայոնում շնորհիվ մի շարք կենցաղային, ազգային ե այլ պայմանների: Այդ կուտուրան հանդիսանում ե «ազգային», վրձնի նրա համար, վոր նա բովանդակում ե ազգային տարրեր կամ մոմենտներ, այլ նրա համար, վոր նա հիմնված ե տվյալ ժողովրդի ազգային, տեղական ե այլ առանձնահատկութեանների լրիվ հաշվառման վրա ե տարածվում ե տվյալ ազգութեան լեզվով: Ի միջի այլոց, յես կարծում եմ, վոր լեզուն անհրաժեշտ նշանացուցը չե այն բանի, վորպեսզի կուտուրան համարվի ազգային. «ազգային իր ձևով» կուտուրայի բնույթը դրանում չի կայանում: Յեթե, Ադրբեջանի Կենտկոմը իր կենտրոնական որդան «Բազմի Բանվորը» հրատարակում ե ուսանելն լեզվով ե կամ Տաշկենդում «Արեւելքի ճշմարտութեւն» թերթը լույս ե տեսնում նույնպես ուսանելն, ապա այդ թերթերը գլխավորապես արձագանգելով Արեւելքի մասսայի կյանքին վերաբերող խնդիրներին, ավելի շուտ հանդիսանում են այնտեղ ապրող մասսայի կուտուրական կյանքի տարրերը, քան ուսական կուտուրայի: (Յես տեսնում եմ, վոր այս մտքին չհամաձայնող-

ներ կան, — կարելի է այդ մասին վիճել): Վորովհետև այդ կուլտուրան
թեև տվյալ դեպքում ստեղծվում է վոչ մեծամասնության ազգային
լեզվով, արտահայտում է վոչ թե միայն այսպես կոչված կուլտուր-
աբեզերների (վորոնք կարող են առաջ քաշվել վոչ հիմնական ազգու-
թյուններից, վոր մենք ընդհանրապես ժխտում ենք) ռուսական կուլ-
տուրան, այլ և մի շարք ազգությունների կուլտուրան և իդեոլոգիան,
վորոնք բացի մայրենի լեզվից տիրապետում են նաև ռուսական լե-
զուին: Այսպիսով այդ կուլտուրան միաժամանակ հանդիսանում է և
ազգային, և միջազգային: Մեզանում ազգային կուլտուրան ազգային
է համարվում նրա համար, վորովհետև նա լայն մասշտաբով հարմար-
վում է տվյալ հանրապետության կամ ռայոնի ազգության մասսայի
պահանջներին: Դրա համար ել յես «ազգային կուլտուրա» տերմինը
միանգամայն հարմար է համարում վոչ միայն ԽՍՀՄ-յան արևելյան
ժողովուրդների համար, այլև բոլորի, ինչպես նաև ռուսների համար:

Յեթե Վահանյանը բուրժուական կուլտուրայի առանձնահատկու-
թյունը տեսնում է նրանում, վոր նա ստեղծվում է ինտելիգենտական
կաստայի վերնախավներից, և մասնագետներից, վորոնք ստեղծում են
դասակարգային իլլյուզիաներ մարդկության վորոշ խավերի շահերի
համար, — ազգային կուլտուրա անվան տակ, ապա խորհրդային պայ-
մաններում, յերբ կուլտուրայի դեմոկրատականացման և պրոլետարա-
կանացման պրոցեսն է տեղի ունենում, — խոշոր չափով վերանում են
այն սպեցիֆիկ գծերը, վորը առաջ կային ազգային կուլտուրաներում:
Վորովհետև բացի այն հարցից, թե ո՞ւմ համար է կանխորոշված կուլ-
տուրան, ավելի շատ նշանակություն ունի այն հարցը, թե ո՞վ է այդ
նոր կուլտուրայի ստեղծողն ու տոն տվողը: Այստեղ ամբողջովին վե-
րանում է վահանյանական այն վերսխան, վոր բոլոր պայմաննե-
րում ազգային կուլտուրայի ստեղծողը բացառապես ինտելիգենտա-
կան կաստան է: Մենք արդեն վորոշ հաջողություններ ունենք նաև
կուլտուրայի կոլեկտիվ ստեղծագործման խնդրում. մենք դեպի այդ
ստեղծագործությունն ենք քաշում ամենացածր խավերին: Բանգուղ-
թյուններից ցանցի և գործնեյություն արագ աճումը այդ մտքի հիմ-
նավորման ամենալավ որինակը կարող է ծառայել: Խորհրդային սիս-
տեմի բոլոր աշխատանքներն ու շինարարությունը հիմնված են մաս-
սաների վրա և դա հանդիսանում է խոշոր կուլտուրական գործոն, վորը
մասսային ավելի լավ է դաստիարակում, քան վորևե գերբ: Այդ բոլորը
իրագործվում է նաև իբրև ազգային կուլտուրական շինարարության
ձև, հակառակ Վահանյանի, վորը պնդում է, թե ազգային կուլտուրան
թույն է և վատ հիվանդություն:

Յես կուլտուրայի ձեզ ցույց տալ մի շարք համեմատություններ
ազգային հանրապետությունների և շրջանների կուլտուրական
շինարարության ձևերի, — այդ կուլտուրաների վորոշ մասերում ազ-
գային և միջազգային հասկացողությունների սահմանավորոշման տեսա-
կետից, — և դաշնակից (ֆեդերատիվ) խորհրդային հանրապետություն-
ների ձևերի միջև: Նախ և առաջ հիշեցնում եմ Լենինի այն ցիտատը,
վորը յես կարդացի ձեր առաջ, և վորում ցույց է տրված, թե կուլտու-
րայի նվաճումները ավելի միջազգայնացման են յենթարկվում, — դա
հատկապես վերաբերվում է նյութական կուլտուրային: Հիշենք նաև,
թե Կաուցկին ինչ է գրել ազգային կուլտուրայի մասին Բաուերի հետ
ունեցած վեճում: Նա ասում է, վոր «ներկայիս կուլտուրան ազգային
չի համարվում, այլ յեվրոպական, վորովհետև յեվրոպական հանդիսա-
նում է այն յեկման կետը, վորտեղից կուլտուրան տարածվում է աշ-
խարհի բոլոր յերկրներում: Դա վերաբերվում է վոչ միայն նյութական
այլև հոգեոր կուլտուրային: Վոչ մի խոշոր գյուտ չի կարող կատարել
ազգությունը, վոչ մի խոշոր միտք չի կարող արտահայտվել վորևե
լեզվով և ընդհանուրի ուշադրության առարկա դառնալ, յեթե նա միա-
ժամանակ չի հաղորդվում աշխարհի մյուս կուլտուրական ազգություն-
ներին: Միայն ընդհանուր հետաքրքրություն չունեցող և աչքի չընկ-
նող գործերն են, վորոնք սահմանափակվում են այն ազգության շրջա-
նակներում, ուր յերևան են յեկել նրանք: Միայն այդպիսիները
կարելի յե համարել իբրև «ազգային» կուլտուրա: Նրանք համենայն
դեպս կազմում են ժամանակակից կուլտուրայի ավելի քիչ նշա-
նակալից մասը» (տես Կաուցկի, — «Ազգային պրոբլեմ», եջ 158):
Մեզ մոտ ևս իր ամբողջ ծավալով քննելով ազգային կուլտուրան,
պետք է ընդունել, վոր այդ կուլտուրայի նշանակալից մասը ունի հա-
մամիութենական նշանակություն և իբրև այդպիսին, խոշոր չափով
միջազգայնացված է Միության մասշտաբով, որինակ կենտրոնական
բարձր ուսումն. հիմնարկներում և կոմ. բարձր ուսումն. հիմնարկներում
ազգությունների աշխատակիցներին խորացրած պատրաստականու-
թյուն տալու հարցը, նրանց կողմից նշանակալից չափով կուլտուրայի
յուրացումը կենտրոնացած կարմիր բանակում, կուսակցության մեջ և
այլն: Ավելի խոշոր կուլտուրական ազդեցություն են ցուցահանում
կենտրոնական պարբերական մամուլը և ընդհանուր կուլտուրական
նվաճումները, վորոնք կան ռուսական կամ մի այլ ազգության գրա-
կանության մեջ: Խոշոր կուլտուրական նշանակություն ունի նաև ազ-
գային հանրապետությունների արդյունաբերական և տնտեսական
շինարարությունը, վոր Խորհրդային Միության ժողովրդական տնտե-

սության մի բաղկացուցիչ մասն է կազմում։ Այստեղ ազգային և միութենական կուլտուրայի ելեմենտները խճողվում են իրար հետ։

Ազգային կուլտուրայի գեղարվեստական տարրերը, — թատրոն, կինո, ռադիո, — շատ արագ կերպով միջազգայնացման են յենթարկվում այդ կուլտուրական արժեքների խոշոր չափերով մեկ հանրապետությունից մյուսը փոխադրելու հետևանքով, մանավանդ, վոր նրանց փոխադրությունը առանձին դժվարություն չի պահանջում։ Գեղարվեստական գրականությունը ընդհանրապես տարբերվում է իր խոշոր ինքնուրույնությունից (չնայած, վոր նա ել իր զարգացման ընթացքում չի խուսափում ավելի կուլտուրական հարևանների ազդեցությունից)։ Նա խոշոր չափով արտացոլում է ազգության ներքին յուրահատուկ կյանքի առանձնահատկությունները։ Նրանում մենք բավական շատ ազգայնական տարրեր ենք գտնում, բայց այդ յերևույթը անցողական է։ Կուսակցություն ակտիվ դեկավարություն օժանդակություն կարելի չի շատ բաներ ուղղել, չնայած վոր ուղեկիցների պրոբլեմը ազգությունների մոտ ևս մնում է նույնքան սուր, ինչքան և կենտրոնում։ Նոր խորհրդային կենցաղը դեռ այնքան չի ամրացել ու ձևակերպվել, վորպեսզի ազգությունների յերիտասարդ գրողները կարողանային արդեն այն վերարտադրել գեղարվեստական ամբողջական ճշտությամբ, դրա համար ել հաճախ նրանք իրենց նյութը վերցնում են ավելի ուսումնասիրված և ավելի ծանոթ մասսայի անցյալ կամ ներկայի կյանքից, առանց բավականաչափ հաշվի առնելու նոր կենցաղի տարրերը։ Հիմա արդեն քիչ չեն այն ազգային գրողները, վորոնք մեր ժամանակակից կյանքը պատկերացնում են բավական վարպետությամբ ու սիրով։ Նրանց քանակը հետզհետե կաճի և աշխատանքի վորակն ել կլավանա։ Յես այստեղ մանրամասն չեմ կարող կանգ առնել ազգային գրականության թեմայի վրա, վորը հատուկ քննություն է պահանջում, բայց այնուամենայնիվ միանգամայն պարզ է, վոր ազգային կուլտուրայի տարրերն այս բնագավառում ևս բավական արագ խորհրդայնանում են։ Իշխող պրոլետարիատի զաղափարախոսությունը այստեղ ևս զրավում է իր դիրքերը, բայց այդ ճանապարհին հանդիպում են շատ դժվարություններ, վորոնք բղխում են ազգային ռայոնների առանձնահատուկ տնտեսական ձևերից, վորոնք իրենց խորքում ունեն շատ յետամնաց տարրեր և վորոնց վերացումը պահանջում է համեմատաբար ավելի յերկար ժամանակամիջոց։

Յես պետք է ասեմ, վոր յեթե առաջ խոսելով կուլտուրայի մասին, խոսում եյին տարբեր ազգությունների կուլտուրաների միախառնվելու և միջազգայնացման ու այլ պրոցեսների մասին, ապա ընդհանրապես այդ պնդումներն հիմնվում եյին այնպիսի յերևույթ-

ների վրա, ինչպես որինակ բնագիտական, մատեմատիկական և տեխնիկական գիտությունների միջազգային բնույթը, այսինքն կուլտուրայի ավելի բարձր ձևերի, վորոնց մասին մենք արդեն վորոշ չափով խոսեցինք։ Ներկայումս, ազգային կուլտուրայի զարգացման պայմաններում, մեզ մոտ նկատվում են վորոշ հակասություններ։ Կուլտուրաների միախառնվելու հարցում այդ հակասությունը կայանում է նրանում, վոր մի կողմից մենք ինքներս ենք ուժեղ կերպով տանում ինտերնացիոնալիստական դաստիարակչական աշխատանք՝ ազգություններին իրար մոտեցնելու, նրանց յեղբայրական դաշինքն ամրապնդելու ուղղությամբ, բայց միաժամանակ մենք ինքներս վորոշ իմաստով տանում ենք նաև խոշոր ազգային աշխատանք, վորը, կամա թե ակամա, վորոշ խնդիրներում ազգություններին հեռացնում է իրարից, մի ազգություն կուլտուրան հեռացնում է մյուս ազգություն կուլտուրայից։ Իհնչ է նշանակում այս. բանը նրանումն է, վոր կուլտուրան իր բարձր ողակներում արտացոլում է միջազգային և հաճախ նույնիսկ կոսմոպոլիտական տարրեր, վորոնք գոյություն ունեն խոշոր ինդուստրիայի մեջ, վորը վաղուց արդեն դուրս է յեկել բոլոր ազգային շրջանակներից և միանգամայն հասունացել է միջազգային սոցիալիստական հասարակակարգի սեփականությունը դառնալու համար։ Միայն առանձին ազգությունների տիրապետող դասակարգի իմպերիալիզմը, վորը դեմ չէ հարստանալու ուրիշ ազգությունների կուլտուրայի և տերիտորիայի հաշվին, ամեն կերպ խանգարում է զանազան ազգությունների կուլտուրաների միջազգային մոտեցումը, հակառակ նրանց տնտեսությունների բնականորեն իրար մոտենալու ձգտումներին։ Քաղաքների ազգաբնակչության վերին շերտերը, հաճախ իրենց մայրենի լեզվի հետ միասին, նաև խոսում են հարևան ուժեղ ազգի կամ ազգությունների լեզուներով։ Յերկու լեզվով խոսելը դառնում է արդեն բավական սովորական յերևույթ։ Ի միջի այլոց, Ա. Ա. Պոտեբնյան գտնում է, վոր յերկու լեզվի միավորությունը — սոցիոլոգություն է, վոր նա խանդարում է ստեղծագործող տաղանդների զարգացմանը, քանի վոր մի լեզվի «վոգին» խանգարում է մյուսի «վոգուն»։ Նա ցույց եր տալիս իբրև որինակ Տյուտչևին, վորի յերկրորդ «մայրենի» լեզուն, Ֆրանսերենը, թուլացնում եր նրա ռուսերեն լեզվով գրված ստեղծագործությունները։ Բայց այդ ցուցմունքը իր հերթին ժխտվում եր Պուշկինի որինակով, վորի համար Ֆրանսերեն լեզուն նույնքան մայրենի յեր, ինչպես և ռուսերենը և Տուրգենևի որինակով, վոր նույնպես ուներ յերկու «մայրենի» լեզու, և այդ չեր խանգարում նրանց գեղարվեստականորեն ստեղծագործելու (տես Ուլյանինիկովի «Психология национальности», էջ 29)։ Բայց յերկրկնականության

հարցին յես կանգ առա ի միջի այլոց և դրան այլևս չեմ վերադառնա: Ինչ և իցե, բարձր կուլտուրայում մենք ունեցել ենք ազգությունների մոտեցնող շատ մոմենտներ: Ազգությունների հաղորդակցության և շփման դյուրությունները ավելի կոժանդակեն դրան: Այդ գործում փոքր դեր չի կատարի նաև ռադիո-հաղորդակցությունը կամ հեռախոսային խոսակցությունը հաղարավոր կիրոմեաբերի վրա, ցամաքային և ջրային հաղորդակցության արագացումը, ուղային հաղորդակցությունը, ինչպես նաև նոր միջազգային գիտական, տեխնիկական և այլ տեքմիկաների որեցոր աճող գործածությունը: Կարելի չե նաև կանգ առնել միջազգային պրոլետարական համերաշխության ազդեցության ու նշանակության վրա, ազգությունների կուլտուրայի մոտեցման և միջազգայնացման իմաստով: Բայց այդ գործոնը առայժմ ավելի վերաբերվում է ապագային, — հիմա դեռ ուժեղ է II Խտերնացիոնալը, վորը բաժանում է զանազան յերկրների բանվորներին:

Դառնանք մեր ազգային հանրապետությունների խորհրդային պայմաններին, ուր ազգային կուլտուրան ծավալվում է առաջավոր նյութական կուլտուրայի սաղմային պայմաններում: Այստեղ մենք գործ ունենք մասսաների կուլտուրայի հետ, վորը համարյա թե անշարժ, դարեւորդ ապրել են միևնույն վայրում, վորի տնտեսությունը մի առանձին հառաջդիմություն չի կատարել և շատ քիչ է տարբերվում պապենական ժամանակաշրջանի տնտեսությունից: Այդ պայմանների շնորհիվ ուժեղ կերպով պահպանվել են կրոնն ու անշարժությունը, իսկ նրանց դեմ պայքարը դեռ չի ընդունել հարկ յեղած չափերը և առայժմ միայն մասնակի հաջողություններ են ձեռք բերված: Յերբ մենք դրան ավելացնենք և այն, վոր մեր խորհրդային պայմաններում ազգությունների կուլտուրայի ստեղծագործողները հանդիսանում են վոչ այնքան առանձին անհատները (վորոնք բոլոր պայմաններում կարող են տարբերվել իրենց դյուրաշարժությամբ), այլ քաղաքի և գյուղի ստորին լայն մասսաները, ապա պարզ կլինի, վոր այդ կուլտուրան, վորոշ ժամանակամիջոցի ընթացքում, չի կարող գերծմնալ վորոշ չափով ազգային փակվածությունից: Դրա ոգտին են խոսում նաև մարքսիզմի հիմնական դրույթները:

Այս ամենը հաստատում է նաև այն, վոր այդ ազգային կուլտուրան դեռ պետք է անցնի շատ մեծ ժամանակաշրջան, վորպեսզի իր բովանդակությամբ դառնա միջազգային: Յես կարծում եմ, վոր ազգային և միջազգային կուլտուրայի հարցում մենք պետք է տարբերենք այն հիմնական մոմենտները, վոր յես ընդգծեցի այստեղ: Մի կողմից խոշոր կուլտուրան, վորը արագ միջազգայնացման է յենթարկվում, իսկ մյուս կողմից — մենք այդ ճանապարհին հանդիպում ենք

մեծ դժվարությունների: Յես ուզում եմ նախազգուշացնել, վոր դուք ինձ չհամկանաք այնպես, վորպես թե յես կուլտուրաների պայքարի հարցն եմ դնում և մի ազգի կուլտուրան մյուս ազգության կուլտուրայից բարձր եմ համարում, — վոր իբրև թե մի ազգության կուլտուրան մյուսի հանդեպ ունի բոլոր առավելությունները և նրան դուրս կըքի հրապարակից: Այս միտքը միանգամայն ի չիք է դառնում այն պայմաններում, յերբ մասսաներն սկսում են իրենք ստեղծագործել իրենց կուլտուրան, վորը և նրանք կարող են ստեղծել միայն իրենց պատկերի և նմանության համեմատ: Յեթե զանազան յերկրների միջև սկսում է մրցություն, որինակ, Ֆրանսիայի ու Անգլիայի, կամ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև, ապա այդ տնտեսական մրցությունը լրացվում է կուլտուրաների մեջ առաջացող մրցությամբ և ամեն մի ազգություն ձգտում է հիմնավորել իր կուլտուրայի գերիշխանության իրավունքները, իբրև ավելի բարձրի կամ ավելի բանականի, իսկ ուրիշ ազգության կուլտուրայի արժեքը ձգտում է ամեն կերպ գցել: Այս ընդհանուր մրցությունը ի վերջո հանգում է զինված կոնֆլիկտի, պատերազմի: Մեզանում մրցման այդ տեսակ տարրեր չկան: Մեզ մոտ չի կարող լինել այդպիսի մրցություն, քանի վոր մեզանում գոյություն չունի ազգային խտրություն և ազգերը իրար հետ մրցելու տեղիք չունեն: Մեզ մոտ հիմա իրականացվում է ազգությունների համագործակցությունը և մեր յերկրում տեղի չե ունենում ընդհանուր սոցիալիստական շինարարություն: Մեզ մոտ բոլոր ազգությունները կատարում են միևնույն աշխատանքները, ձգտում են միևնույն նպատակներին, ըստ վորում այն ազգությունները, վորոնք առաջ են անցել, ոգնում են բարձրացնելու յետամնաց ազգությունների կուլտուրան: Դրա համար ել, ընկերներ, այդ խնդրում մեր ազգությունների կուլտուրան ավելի ու ավելի խոշոր չափերով իր վոգով դառնում է միջազգային, ազգություններին իրար մոտեցնելու իմաստով: Սակայն նրանք դեռ շատ յերկար ժամանակ կպահպանեն իրենց առանձնահատուկ գծերը, վորոնք կտարբերվեն իրարուց: Մեր ազգությունների կուլտուրաները դեռ բավական յերկար ժամանակ կընթանան զանազան ուղիներով, կստանան առանձին յերանգներ՝ համապատասխան առանձին ազգությունների յուրահատկություններին: Բայց նրանք բոլորը տանում են դեպի միասնական սոցիալիստական նպատակ: Մենք հիմա ապրում ենք այնպիսի շրջանում, յերբ ազգային-կուլտուրական հարցը դեռ չի ստացել իր վերջնական լուծումը՝ առանձին ազգությունների կուլտուրայի դեմքի լրիվ հայտնաբերումով: Ի հարկե, ազգային հարցը հիմնականում մեզանում լուծված է: Բայց այնուամենայնիվ դեռ շատ բան կա անելու: Հատկապես դառնալով շատ բան է մնացել անելու կուլտու-



չենկոյի լեզուն, և հիմիկվա ուկրայինական լեզուն մի կողմից և ռուսերեն լեզուն — մյուս կողմից: Շեկչենկոյին ձեռնից համարյա ամեն մեկը կհասկանա: Բայց յեթե վերցնենք վորևե ուկրայինական ժամանակակից գրողի — Տիչինին, Դոսովետսկուն կամ Նորերից վորևե մեկին, — յես չգիտեմ ձեռնից ո՞վ կհասկանա այդ լեզուն ռուսերեն լեզվի հիման վրա, յեթե նա չգիտե ուկրայինական, կամ թեկուզ լեհական լեզուն: Ռուսական լեզվի վերաբերյալ մենք այստեղ տեսնում ենք խոշոր տարբերություն: Նույնը պետք է ասել նաև բելոռուսական լեզվի վերաբերյալ, վորը այնքան մոտ է ռուսերեն լեզվին: Ինչո՞ւ յես այդ տեղի ունենում: Յես կարծում եմ, վոր սա ազգայնականների ազդեցության տակ առաջացած չար կամքից է, վորոնք ցանկանում են ինչ գնով ել լինի բաժանվել կամ հեռանալ (յերբեմն այդ ել է լինում, բայց դա հիմնական գործոնը է), այլ դա միանգամայն բնական պրոցես է: Յեթե մարդիկ, նացիոնալիստներ լինելով, ուզում են ունենալ իրենց սեփական լեզուն, նրանք, բնականորեն, հարց են դնում լեզվի մաքրության մասին: Սկսվում է փնտրուք պատմության, գավառաբարբառների խորքերում, հին հիշատակարաններում և այլն, սկսում են փնտրել ինքնուրույնություն՝ և գտնում են, — «փնտռեցեք ու կգտնեք»: Դժբախտաբար Խորհրդային Միության առանձին ազգությունների գիտնականները, վորոնք պարապում են առանձին լեզուների ֆիլոլոգիական հարցերով, մեծ մասամբ կայուն մարքսիստներ են, նրանց մեջ շատ քիչ կոմունիստներ կան և չափազանց շատ՝ ազգայնական տրամադրություններով խմորվածներ: Այս հանգամանքը որչեղտիվորեն դնում է իր կնիքը Խորհրդային Միության մեջ կատարվող՝ ազգային լեզուների զարգացմանը նվիրված գիտական աշխատանքների վրա: Այս դրությունը յերկար հանդուրժել չի կարելի: Կյանքը պահանջում է մեզանից ձեռք առնել կոնկրետ միջոցներ այդ ուղղությամբ:

Ինչպես մենք արդեն ասացինք, ազգային կուլտուրայի վրա խոշոր կնիք են դնում այդ կուլտուրայի ստեղծմանը մասնակցող մասսաները, նրանց մասնակցությունն իր կնիքը դնում է նաև ազգությունների լեզվի վրա: Ազգությունների լեզուն մեծ մասով հեղափոխության շրջանը մտավ չզարգացած, յեթե վոչ իր սաղմնային վիճակում: Շատ ժողովուրդներ բոլորովին կամ համարյա թե բոլորովին գրականություն չունեցին: Գրականության բացակայությունը ազգում է լեզվի վրա բազմաթիվ բարբառներ պահպանելու և մի ընդհանուր գրական լեզվի չգոյության խնդիրներում: Ընդհանուր գրական լեզուն հնարավորություն կունենար շահագործելու ազգային լեզվի հիմնական արմատները և կազմելու նոր, պակասող բառեր, — վորոնցով կարելի յե նշել նոր ու ընդհանուր յերևույթներ առանձնացած ազգերի կյանքում:

Ամեն սերունդ իր լեզուն վերակազմում է, իսկ հեղափոխության ժամանակաշրջանում տեղի յեն ունենում լեզվի հիմնական շարժումներ և փոփոխություններ: Այդ յերևույթը, իհարկե, բացատրվում է վոչ թե դեկրետներով, վորոնք հեղափոխում են լեզուն, այլ ավելի շուտ՝ նրանով, վոր այդ լեզուն գործածող մասսաները սկսում են ավելի լարված և շարժուն կյանքով ապրել, վորը և անդրադառնում է լեզվի զարգացման վրա:

Ազգությունների լեզուների զարգացման փորձը միաժամանակ մեզ ցույց է տալիս այն կանոնավոր և բնական տենդենցները և թեքումները, վորոնք ուղղված են «ավելորդ լեզվաբանության» կողմը ի վնաս առողջ մտածելակերպի և լեզվի դեմոկրատականացման: Իմ անցյալ գեկուցման մեջ յես նշեցի այն պայքարը, վոր մեր կողմից տարվում է մի քանի արևելյան հանրապետություններում շատ տերմինների անիմաստ արաբականացման, և միայն ինտելիգենտների շրջանում գործածվող բառերի դեմ. նոր խոսքեր և տերմիններ փնտրելիս նրանք անտես են առնում ժամանակակից կենդանի բարբառը և հատկապես բանվոր ու պուլգացի մասսայի բարբառը: Նոր տերմիններ վորոշելիս նախ և առաջ պետք է ձգտել, վոր այդ տերմինները մասսային հասկանալի լինեն: Այդ հարցի առթիվ դժվար է վերջնական դեղատոմս տալ, բայց յես կասեյի, վոր չի հարկավոր վոչ վախենալ, վոչ ել ձգտել ռուսականացման, արաբականացման, իրանականացման և այլն... այլ հարկավոր է ուշադիր հետևել մասսայի խոսակցական լեզվին ու նրա փոփոխություններին, ունկնդրել, թե ինչպես են նրանք ստեղծագործում իրենց նոր հարազատ լեզուն և հետևել նրանց: Պետք է յենթադրել, վոր յերբեմն ավելի կուլտուրական հարևանի ազդեցությունը նկատելի չափով անդրադառնում է ավելի քիչ զարգացած լեզուների վրա: Դադաքների զարգացումն ևս թողնում է իր ազդեցությունը, — բայց յեթե մենք չենք ուզում ընկնել ազգայնականության մեջ, ապա վոչ մի լուրջ հիմք չկա կռվելու նման գործոնների ազդեցության դեմ:

Ըստ ելության շատ ազգություններ միայն ներկայումս են սկսում ձևակերպվել, և ձանաչել իրենց իբրև ազգություն. սկսում են թոթափել իրենցից նահապետական անկազմակերպ կենցաղը և ձևակերպվում են իբրև ազգություն: Ազգությունների բյուրեղացման և միացման պրոցեսները, հասկանալի յե, վոր չեն կարող չազդել լեզվի վրա: Մեզ մոտ լեզվի բյուրեղացման պրոցես է տեղի ունենում, վորը անխուսափելիորեն մի քանի լեզուներ կհեռացնի միմյանցից, մոտենցնելով տվյալ ազգության մեջ յեղած բարբառները: Այս դրությունը իրավացի յե, վոչ միայն ԽՍՀՄ-ի արևմտյան մասում ուս լեզվի վերաբերյալ, ինչպես յես ասեցի, այլ և արևելյան լեզուների վերաբերյալ: Որինակ,

առաջ Աղբրեջանում թուրքմենների և թուրքերի լեզուները ավելի մոտ ելին իրար, քան հիմա, յերբ այդ ազգությունները սկսում են բյուրեղացման յենթարկվել։ քանի վոր ամեն մի լեզու սկսում է զարգանալ հատուկ պայմանների ազդեցության տակ, հատուկ շրջապատում և նյութեր ե քաղում իր հատուկ անցյալից։

Այսպիսով, նախահեղափոխական անձն զրության փոխարեն ներկայումս ձևակերպվում են զանազան լեզուներ,— իրարից ավելի հեռու։ Մի կողմից լեզուն նորոգվում է, քաղում է նոր նյութեր մասսայի կամ մոռացված անցյալի խորքերից, իսկ մյուս կողմից, այնուամենայնիվ յերբեմն մասսային մնում է անհասկանալի, քանի վոր մասսաներն, յես կասեյի, ավելի շատ ծանոթ են հին առօրյա խոսվածքին, այն լեզվական խառնուրդին, վորը առաջ գործածվում եր մեզանում, քան մաքուր լեզվին, վորով իբրև թե վերադառնում ենք՝ ոտարարանություններից ազատված ազգային լեզվի նախնական աղբյուրներին։ Լեզուները մշակվում են, հետևաբար և՛ անխուսափելիորեն հեռանում են միմիանցից։ Յես վերջրի միայն մի քանի որինակներ։ Յես հավատացած եմ, վոր միևնույն զրությունը մի քանի վարիանտներով կարելի յե վերագրել նաև Հյուսիսային Կովկասին, Բաշկիրիային և այլն։ Յես չեմ կարող ավելի մանրամասն կանգ առնել լեզվի պրորլեմի վրա,— դա շատ հեռու կտաներ։ Մեր պրորլեմը կայանում է նրանում, վոր դիտենք, թե ինչպես ե ընթանում ազգային կուլտուրայի ստեղծագործական և լեզուների ու ժողովուրդների իրար մոտենալու պրոցեսը։

Մինչ այժմ մենք խոսում եյինք լեզուների իրարից հեռանալու պրոցեսի մասին։ հիմա կանգ առնենք նաև մոտենցող մոմենտների մասին, վորոնք,— մի քիչ ավելի հեռավոր ապագայում, — անկասկած, խոշոր դեր կխաղան։ Արևելյան ժողովուրդների համար, այդպիսի մոտենցող մոմենտ է հանդիսանում թուրքական նոր այբուբենը, վորը իր միտրինակ ձևով արդեն ընդունելի յե դառնում Խորհրդային Արևելքի արարական այբուբեն ունեցող բոլոր ժողովուրդների համար։ Մյուս մոմենտը կայանում է հետևյալում։ մեր ժողովուրդների լեզուները անցյալում, — իրանց յետամնաց զրությամբ շատ հեռու ելին ժամանակակից իսկական լեզվից։ Նրանք տերմինոլոգիա չունեյին, չկային խոսքեր շատ հասկացողությունների համար, — վորոնք այն ժամանակ նրանց շրջանում գոյութուն չունեյին։ Հիմա ստեղծվում են մի շարք նոր հասկացողություններ, գործածում են ոտար բառեր, թեև վորոշ տեղերում ազավաղում են, այդ բառերը հարմարեցնելու և ընդունելի դարձնելու համար և վորոշ տեղեր ել աշխատում են ազգային վոգի մացնել տերմինոլոգիայի մեջ։ Կա առաջը հարմարեցում և կա ազգայնականութուն տերմինոլոգիայի հարցում, — դրանք տարբեր

բաներ են։ Տերմինոլոգիայի հարցում մեզանում կա և այս և այն, նախած, թե վորտեղ և ով ե այդ գործով զբաղվում։

Յույց տված մոմենտները ազգություններին մոտեցնում են իրար։ Հարց ե ծագում, թե այդ մոմենտներից վորը ուժեղ դուրս կգա։ Յես կարծում եմ, վոր վորոշ տեղական ժամանակաշրջանում անկասկած տեղի կունենա առաջին պրոցեսը, այն է լեզուների դիֆերենցիացիան և բարբառների մոտեցումը ամեն մի լեզվի շրջանակում։ Այդ պրոցեսը դեռ չի վերջացել, ինչպես նաև դեռ վերջնականորեն չի ավարտվել ազգությունների կազմակերպման պրոցեսը ԽՍՀՄ-յան մեջ։ Այդ պրոցեսը մեզանում տեղի յե ունենում խոշոր մասշտաբով բազմազան կատեգորիայի տասնյակ միլիոնավոր մարդկանց վերաբերյալ, վորոնք պատկանում են սոցիալական տարբեր խավերի, և իրենց ամբողջականությամբ ու լեզվի միջոցով ազդելու յեն իրենց ազգային կուլտուրայի ստեղծման վրա։ Ազգային կենցաղի առանձնահատկությունները դեռ յերկար ժամանակ կազդեն լեզվի և կուլտուրայի ստեղծման վրա, — վոչ մի արհեստական հսպերանտո այստեղ չի ոգնի։

Մենք արդեն առաջուց մատնանշել ենք, վոր լեզուների իրարուց հեռանալը վճռական չե, այլ ավելի շուտ՝ ժամանակավոր, վորովհետև հայտնի պայմաններում, մի շարք գործոնների ազդեցության տակ, ինչպես տնտեսական, կուլտուրական, միջազգային մերձեցման, հարեվան լեզուների սովորական ազդեցության՝ իրար վրա, — մենք դիտելիակորեն, ժամանակի ընթացքում, ունենալու յենք թեքում ներկա տենդենցի մեջ և անցնելու յենք ազգակից լեզուների մերձեցմանը։ Իրանք բարդ խնդիրներ են, վոր կարելի յե վերլուծության յենթարկել միմիայն յուրաքանչյուր լեզվի վերաբերմամբ առանձին-առանձին, այն չափով, ինչ չափով վոր ապագայում Խորհրդային Միությանը կմիանան սահմանակից այնպիսի յերկրները, վորոնց լեզուն ընդհանուր է Միության ժողովուրդների լեզվի հետ և այլն։

Յելնելով տվյալ ընդհանուր զրությունից, աշխատենք պատասխանել այն հարցին, թե այդ բնագավառում ինչպիսի խնդիրներ են կանգնած մեր առաջ։ Յես կարծում եմ, վոր առաջին հերթին մեր առաջ կանգնած է կուսակցական և խորհրդային ղեկավարության ուժեղացման խնդիրը։ Յես պետք է ասեմ, վոր ժամանակն է մեզ, կուսակցությանը, խորհրդային իշխանությանը ավելի ակտիվ կերպով միջամտելու այդ գործին։ Մենք, ինչպես կոմունիստներ, ինչպես մարքսիստներ ուսումնասիրում ենք այդ պրոցեսների ընթացքն ու տենդենցները, հաստատում ենք տարբեր զրությունների գոյությունը, բայց չե վոր մեր նպատակը նրանում չե, վոր միայն բացատրենք աշխարհը, այլ նրանում, վորպեսզի այն վերակառուցենք։ Հետևաբար

գործված: Կուլտուրան կարող է արտացոլել մասսաների ազդեցութ-
յունը, բայց միայն դրանով կուլտուրան դեռ չի դառնում մարքսիս-
տական, լենինյան, հեղափոխական. նա՛ կլինի միայն դեմոկրատական: Յեթե նույնիսկ «նորին մեծություն» պրոլետարիատի վերաբերյալ կա-
րելի չե ասել վոր յերբեմն, պատմական վորոշ պայմաններում, ան-
հրաժեշտ է, այսպես ասած, — դրսից մտցնել իդեոլոգիական կայու-
նության և հեղափոխականության տարրեր (այդ վորով խոսում է,
ինչպես բոլորին հայտնի չէ, Լենինը իր «Խ՛նչ անել» գրքում), ապա
ազգային քաղաքականության և ազգային կուլտուրայի հարցերում, վոր-
տեղ մեզանում վորոշիչ գործոնները հանդիսանում են լայն մասսա-
ները, վորոնք դեռ բավական յերկար ժամանակամիջոցում իրենց խո-
շոր մեծամասնությամբ կենդակացնեն գյուղացիական մանր-բուրժուա-
կան տարրերին, — ապա մեր կողմից պահանջվում է իրական միջա-
մտություն կուլտուրայի տարերային զարգացման պրոցեսին:

Խ՛նչպիսի ձևերով այդ միջամտությունը կարող է արդյունավետ
դառնալ: Խ՛նչպես կովել այստեղ աջ թեքման դեմ և լինչ ոգտագործել
այդ կովում: Մեր յետամնաց ժողովուրդների ազգային կուլտուրաներում
կան թերություններ և առավելություններ: Նախապես մի յերկու խոսք
առավելությունների մասին: Խոշոր առավելություն մեր պայմաններում
կայանում ենք անում, վոր մեր ամենայետամնաց ազգությունները բախտ
ունեցան խոսափելու իդեոլոգիական բավական շատ վտանգավոր բանե-
րից: Մենք, հին սերունդը, դաստիարակվել ենք բուրժուական՝ միստի-
քայով սնված գրականությամբ և այլն, մենք սովորել ենք քրիստոմա-
տիաներով և դասագրքերով, վորոնք լցված են յեղել միապետական և
սե-հարյուրակային կամ բուրժուական բովանդակությամբ: Մենք մեր
գրքի կուլտուրան ստացել ենք բուրժուական հիմունքով: Հասկանալի
չէ, վոր մեր դեպի բուրժուական կուլտուրան ունեցած բացասական
վերաբերմունքին քիչ չի նպաստել ինքը իշխող կարգը, վորը բավա-
կան համոզիչ կերպով ցույց եր տալիս իր անընդունակությունը գոր-
ծնականում: Յեվ այսպես, յեթե մենք, հին սերունդս, կուլտուրան
ստացել ենք քաղաքում՝ կառուցված բուրժուական հիմքերի վրա, յեթե
գյուղական մասսաները իրենց դաստիարակությունը ստացել են եծան
անհամ գրականության վրա, — իսկ դուք լավ գիտեք, թե ինչ եր
ներկայացնում իրենից այդ եծան գրականությունը, վոր այնպես խո-
շոր չափով տարածվում եր գյուղերում միապետական, ազգային և
կրոնական պրոպագանդի վորով, — ապա մեր յետամնաց ազգու-
թյունների լայն մասսաները հենց սկզբից իրենց կուլտուրական մկր-
տությունը համարյա թե ստանում են Լենինի և լենինիզմի վրա: Մեր
ազգությունները, վորոնք հիմա ունեն 5—10% գրագետներ (իսկ կան

ավելի «բախտավորներ», վորոնք ունեն միայն 20% գրագետներ), նոր
միայն սկսում են իրենց կուլտուրական զարգացումը, — ինչից են
նրանք սկսում: Նրանք ընթերցանության գիրք կամ քրեսթոմատիա
են ստանում, վորը կեսով չափ կազմված է Լենինի գրվածքներից,
մասամբ Ստալինից, Մարքսից, Ենգելսից և այլ մարքսիստներից:
Գործն այսպիսով սկսվում է համարյա թե այբբենարանից: Ահա թե
ինչպիսի կուլտուրական դաստիարակություն են ստանում մեր յետա-
մնաց ազգությունները: Յեթե դուք վերցնեք մեր ազգությունների
լեզվով կատարված հրատարակությունները, ասղա, անկասկած, այնտեղ
կգտնեք նաև շատ վատ բաներ:

Մենք լավ գիտենք, վոր ազգայնական ինտելիգենցիային հաջողվում
է ներս քաշել մեր նոր գրականության մեջ իր ֆլասակար իդեոլոգիայի
վորոշ մասը, — պոեզիայի մեջ, պրոզայի մեջ, դասագրքերի, լրագրների
մեջ և այլն: Վոչ վորքի համար դա գաղտնիք չէ, դրա մասին շատ հա-
ճախ գրում են գրախոսականներում, հաշվետվությունների մեջ և
այլն: Բայց մեր դասակարգային թշնամիներին շատ քիչ անգամ է հա-
ջողվում այնպես խաբել մեզ, վոր մի ամբողջ գիրք իր ամբողջովին
ֆլասակար ուղղությամբ աննկատելի անցնի լուսծողկոմի, գրաքննու-
թյան, քննադատության, ուսուցչի, ընթերցողի և մամուլի կողմից և
կարողանա յերկար շարունակել իր գոյությունը: Բացի դրանից, շատ
ազգերի մեջ թարգմանական գրականությունը գերիշխում է ինքնու-
րույն գրականության վրա: Այդ թարգմանությունները արված են
ուռսերեն լեզվով լույս տեսած ավելի պոպուլյար և լավ գրքերից: Բայց
պատահում է յերբեմն, վոր թարգմանում են անհաջող գործեր: Բայց
յեթե դուք վերցնեք տոկոսային հարաբերությամբ բոլորը, ինչ վոր
հրատարակում է վորեն ազգային հրատարակչություն, ապա դուք կտես-
նեք, վոր գերազանցողը հանդիսանում է քաղաքական, հեղափոխական
գրականությունը, վորը մասսաներին դաստիարակում է մեր վորով:
Այսպիսով, յերբ մեր ազգությունները հաղորդակից են լինում իրենց
մոտ ստեղծվող նոր կուլտուրային, նրանք բախտ են ունենում ստանալու
միանգամից առողջ, մարքսիստական, հեղափոխական սնունդ, չփոր-
ձելով միաժամանակ խորթ ու ֆլասակար իդեոլոգիական ուղղու-
թյունների ազդեցությունը (չհաշված կրոնը): Մեր յետամնաց ազգու-
թյունների համար սա հանդիսանում է խոշոր առավելություն: Այն հանգամանքը,
վոր մենք ազգային մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնում
ենք իդեոլոգիական առողջ հիմքերի վրա, յես համարում եմ մեր ամե-
նախոշոր պլյուսներից մեկը:

Մենք ազգությունների մասսաներին տալիս ենք դասակարգային
դաստիարակություն: Մեզ դաստիարակում եյին, վոր հարգենք ավագ-

ներին, ուժեղներին, հոգևորականությանը, ցարին և այլն: Հիմա տեղի յե ունենում այլ դասակարգային դաստիարակություն և նույնպես ավագների վերաբերյալ: Բայց հիմա ավագը հանդիսանում է պրոլետարիատը: Հիմա բանվորական և գյուղացիական մասսաները դաստիարակվում են հեղափոխական և պրոլետարական համերաշխության վուգով: Դրա հետ միաժամանակ մեզ մոտ հանրապետություններում պրոլետարիատը հրապարակ է դալիս և զարգանում հիմնական ազգաբնակչությանից, զարգանում է արդյունաբերությունը և այլն: Առաջ է գալիս քաղաքում կայուն ղեկավարություն ազգության կուլտուրայի, վորը ազդում է նաև գյուղի վրա: Մենք դաստիարակում ենք վորոշ պիյետետ, հարգանք դեպի պրոլետարիատը, դեպի բանվոր դասակարգը, դեպի այն բոլորը, ինչ վոր հեղափոխականորեն կայուն է:

Այսպիսով յես ընդհուպ մոտեցա ցուցահանելու այն բացասական գործոնները, վորոնք դժվարացնում են ազգային կուլտուրայի զարգացումը ի ֆլաա մեզ: Գոյություն ունեցող մասնավոր սեփականության ինստիտուտը դեռ յերկար ժամանակ իրեն զգալ կտա: Դա մասնավադ վերաբերվում է ազգությունների գյուղին, վորտեղ միջին թվով 90% -ը կազմում է միևնույն ազգության պատկանող բնակչությունը: Քաղաքի բնակչությունը հաճախ ներկայացնում է վոչ հիմնական ազգությունը և դա թուլացնում է նրա իդեոլոգիական ազդեցությունը գյուղի վրա: Մենք հանգում ենք հակասող դրություն, այն է, վոր գյուղացու տնտեսության ձևը, նրա անհատական մանր տնտեսությունն ասում են մեկ բան, մինչդեռ մենք ցանկանում ենք ազդել նրա վրա բոլորովին այլ ուղղությամբ: Մենք ավելի շատ հիմնվում ենք, այն տենդենցների վրա, — վորը մենք կոչում ենք ազգային գյուղի տնտեսություն և վորը կպատվաստվի միայն ապագայում, — քան նրա ժամանակակից իրականության վրա՝ իր համարյա նախնադարյան տեխնիկայով: Մենք մեզ պետք է հաշիվ տանք այն մասին, վոր այլ պատմական և քաղաքական պայմաններում շատ ծայրամասային հանրապետություններ իրենց միևնույն տնտեսական մակարդակով, բայց կապված չլինելով կենտրոնների հեղափոխական պրոլետարիատի հետ, միանգամից չեյին կարող իրենց առաջ այնպիսի սոցիալիստական խնդիրներ դնել, ինչպես անում են նրանք այժմս. այնպես վոր շատ խնդիրներում պետք է հիմնվել արտաքին գործոնների վրա, զրսից ճիշտ իդեոլոգիական ղեկավարություն տալու վրա, քանի վոր այդ ազգային հանրապետությունների տնտեսության ներսում՝ բավարար չափով կան այդ տարրերը: Չե վոր յետաձայն յերկրների վոչ կապիտալիստական ուղղությամբ զարգանալն ևս հնարավոր դարձավ միայն շնորհիվ աշխարհի մեկ վեցերորդ մասում կատարված պրոլետարական

հեղափոխություն հաղթանակի, պրոլետարական բանվորական կենտրոնների ղեկավարությամբ: Նման դրությունը պահանջում է բացառիկ զգուշություն, վորպեսզի ճանապարհից չչեղվենք: Նշենք մի հանգամանք, վորը բավական դժվարացնում է քաղաքի բանվորական կուլտուրայի ազդեցությունը ազգային գյուղի վրա, և վորը վորոշ իմաստով տեղի ունի նաև մեր ընդհանուր պայմաններում: Ինչպես յես արդեն ասեցի, յերբ մեզ դպրոցում դաստիարակում եյին բուրժուական յետադիմական գրականությամբ, ապա հիմնական հակասությունը կայանում էր նրանում, վոր մասսաները փաստորեն բուրժուազիայից շահագործվում եյին, ճնշվում, և դա նրանց մղում էր դեպի անբավականություն: Մենք տեսանք, թե ինչպիսի տարրական սոցիալական փաստերով ժխտվում էր այն, ինչ վոր մեզ սովորեցնում եյին դպրոցում, գրականությամբ, և ինչ վոր մեզ սովորեցնում էր ավագ սերունդը: Յեթե մեզ ասում եյին, թե պետք է հարգել հարուստներին, ապա մենք մեր փորձով ֆարրիկում, գործարանում տեսնում եյինք, վոր հարուստը մեզ շահագործում է ու հալածում և այլն: Յեթե նույնը սովորեցնում եյին գյուղացուն, ապա նա փորձով տեսնում էր, վոր կալվածատերը իրեն թալանում է, ճնշում, վոր նա, գյուղացին, համարյա թե ապրում է ճորտության պայմաններում և այլն: Գոյություն ունեի հակասություն այն դաստիարակության միջև, վորը տալիս էր ազգային կուլտուրան, և այն դաստիարակության՝ վորը տալիս էր, վոչ թե այդ հրամցվող կուլտուրան, — այլ ինքը կյանքը, անձնական փորձը, անձնական կենցաղը: Մեր պայմաններում, հեղափոխության վորոշ տարիներում, գործը հետեյալ ձևով էր դրված: Յեթե մենք վերցնում եյինք մանր գյուղացուն, վորն իր փոքրիկ տնտեսության մեջ համարյա թե ապրում էր թշվառ վիճակով և համեմատում ենք քաղաքի պրոլետարիատի հետ, մենք ստիպված եյինք անխուսափելիության հետևանքով թույլ տալ նրանց մեջ վորոշ տնտեսական անհավասարության գոյությունը, և անկասկած, վոչ գյուղացիության ոգտին: Վոչ այն չափով, ինչպես այդ մինչև հեղափոխությունն էր, բայց այնուամենայնիվ գյուղացին ապրում էր վատ պայմաններում, թեկուզ քաղաքային կյանքի բնական առավելությունների հետևանքով: Առաջ նրան ասում եյին, վոր նրա մասին մտածում են, վոր կապիտալիստը կապիտալ է հավաքում նրա համար վոր բանվորը կարողանա ապրել, իսկ գյուղում կալվածատերը նրա համար է, — վոր գյուղացիները կարողանան աշխատել: Դա խաբեբայություն էր, բայց այդ ճարպիկությամբ քողարկում եյին:

Հիմա ասում են — պրոլետարիատը իշխունությունն իր ձեռքն է առել, վոր ձեզ ոգնի, ձեզ հետ միասին կառուցի սոցիալիզմ, այդ

գեպարում անցյալում ձեռնարկած գյուղացիին վերհիշում եր այդ անցյալը՝ Համեմատությունն ստացվում եր անախորժ, բայց նա գոյություն ունեւրստ ելության սխալ ե այդ համեմատությունը. բայց դա հեշտությամբ չի հասկանում յետամնաց ազգությունը, մանավանդ յերբ տվյալ վիճակը դեռ կապված եր հեռավոր կենտրոնի հետ, վորը առաջ նա չեր սիրում:

Հիմա հասկանալի յե, վոր այն աշխատանքը, վոր կատարվում ե գյուղում կուսակցության XV-րդ համագումարի վորոշումների համաձայն, յերբ մենք ձեռնարկում են սոցիալիզմի կառուցմանը նաե գյուղում, տակահան անելով՝ կապիտալիզմը ե նրա իդեոլոգիան սնող արմատները, — գրությունը բավական նշանավոր չափով փոխվում ե: Յերբ հարուստ բայ-ից խլում են նրա հողերի ավելորդը ե տալիս են չքավոր գեղխանին, կամ մանապից խլում են նրա անասունների մեծ ու հարուստ հոտերը ե բաժանում են նրա չորաններին, — այն ժամանակ կատարելապես պարզվում ե, թե ինչ ե տվել հեղափոխությունը չքավոր գյուղացուն: Ազգային գյուղերում սկսում են լայնորեն զարգանալ բամբակի, անասնաբուծական, ծխախոտի ե հացահատիկների կոլեկտիվ տնտեսությունները, վորոնք ստանում են տրակտորներ, մեքենաներ, գալի չափով ե յերկար ժամանակով վարկ, դուրս քշելով տնտեսության հին, յետամնաց ձևերը: Դա սաստիկ բարձրացնում ե բարակներին, չքավորների ե գյուղի ամբողջ խորհրդային ակտիվի տրամագրությունը, ազատելով նրանց կուլակի, մոլլայի, տերտերի ե այլ թշնամի տարրերի ազդեցությունից:

Ճիշտ ե, հիմա պրոլետարիատի կողմից յետամնաց բնակչությանը ցույց ե տրվում բավական մեծ ոգնություն: Բայց պետք ե հաշվի առնել այն հանգամանքը, վոր պահանջն ել աճում ե նրան բավարարող միջոցների աճման հետ միասին: Ինչքան շատ են դա ստանում գյուղացիները, այնքան շատ ե հարկավոր նրանց: Պահանջները բավականաչափ աճել են: Մենք ինքներս այնքան շատ ենք բողոքում հեղափոխական վոգուն, այնքան շատ ենք գոռում ամեն տեսակ արտոնությունների դեմ, վոր այդ չի կարող չանդրադառնալ գյուղացիական ստորին խավերի վրա: Նրանք ավելի շատ են յուրացնում գոյություն ունեցող անհավասարության փաստերը, քան այն ուղիները, վորոնցով մենք ընթանում ենք այդ անհավասարությունը վոչնչացնելու համար: Դրանում կա մասամբ բացասական մոմենտ, վորը չի կարող չանդրադառնալ ազգության գյուղացիության վստահության վրա դեպի պրոլետարական քաղաքը: Անդրադառնում ե դա կուլտուրայի վրա: Այո, անդրադառնում ե: Ի՞նչ ենք մենք տեսնում հիմա: Մենք սոցիալիստական կուլտուրայի տարրերի աճման հետ մի-

ասին տեսնում ենք նաե նշանակալից չափով շովինիզմի ե ազգայնականության աճումը ազգային կուլտուրայում: Ազգայնական ինտելիգենցիան ամենուրեք իրեն բավական ակտիվորեն ցուցահանում ե: Մենք այդ փաստը չենք ծածկում: Մենք տեսնում ենք ավելին, մենք տեսնում ենք, վոր ազգության կոմունիստ ընկերները, վորոնք սկզբից կուսակցական տեսակետից թվում են կայուն ընկերներ, ազգային կուլտուրայի զարգացման պրոցեսում ընկնում են ազգայնականության տարերքի ազդեցության տակ: Այստեղ ներգործում ե վոչ միայն սուբյեկտիվ տրամադրությունը, այլև ուղեկալիվ գործոնները, վորոնք անդրադառնում են մեր կուլտուրական շինարարության վրա:

Մենք ներկայումս ծավալում ենք լայն արշավ քաղաքի ե գյուղի կապիտալիստական տարրերի դեմ: Այդ արշավը նշանավոր չափով կատարվում ե նաե ազգային հանրապետությունների մեջ: Հասկանալի յե, վոր դա առաջ ե բերում սաստիկ ընդդիմադրություն բուրժուական-ազգայնական տարրերի կողմից ե նրանք աշխատում են ոգտագործել մեր դեմ ամեն ինչ, դրանց թվում նաե ազգային մոմենտները, վոր մեծ պատմական նշանակություն ունի շատ ազգերի համար: Դրա հետ միասին հեշտ կարելի յե ոգտագործել մեր դեմ կրոնական մոմենտները՝ դրանք կապելով ազգային մոմենտների հետ: Յետամնաց մասսաների հասկացողությունը այդ խնդիրներում բավականաչափ պրիմիտիվ ե. նրանցում վաղուց գոյություն ունի վորոշ գաղափար այն մասին, թե մարդիկ բաժանվում են ըստ կրոնի, ցեղի ե այլն: Ազգային գաղափարը արդեն հետո յե առաջ յեկել, բայց սերտորեն կապված ե կրոնականի հետ: Այն յերևույթը, վոր մենք տեսնում ենք Արեմուտքում, վորտեղ ազգային գաղափարը իշխում ե կրոնականի վրա, ինչպես, որինակ, կաթոլիկ-գերմանացիներ ե լութերական-գերմանացիներ, թեև այնտեղ ես հայտնի դեպքերում կրոնական տարրերությունը իր վորոշ դերն ե խաղում, բայց վոչ վճռական դեր, մինչդեռ յետամնաց ազգերի մեջ բուրժուական այլ հասկացողություն գոյություն ունի ազգության ե կրոնի մասին:

Հեղափոխության վորոշ շրջանում ազգերի մի մասը գնում եր խորհրդային իշխանության հետ, քանի վոր նա հանդիսանում եր առաջնորդում ճնշված ազգերի ազատողը: Ազգությունները համարում ելին, վոր ազգերի ազատությունը վերջնականապես իրականանալուց հետո կսկսվի դեմոկրատական շրջանը այդ ազգերի կյանքում: Նրանք չեյին մտածում, վոր մեր սոցիալիստական շինարարությունը ամենայն լրջությամբ ներս կպրծնի նրանց ազգային կյանքի մեջ ե ամեն ինչ արմատապես կփոխե, բաժին չթողնելով նախկին «յերգվյալ առաջնորդների», ցեղերի, ժողովուրդների, կրոնական համայնքների ե այլն համար:

Ներկա պայմաններում, յերբ նրանք տեսան այն ամբողջ իսկական վտանգը, վոր սպառնում է նրանց տնտեսական բարեկեցությունը, իդեոլոգիական և ազգային ազդեցությունը, — նրանք սկսում են բավականին կտրուկ յելնել մեր դեմ: Նրանք տեսնում են, վոր կորցնում են իրենց վերջին դիրքերը, վորտեղից ազդում էին մասսաների վրա: Բայց վորոշ ժամանակավոր հաջողություն նրանք ունենում են:

Վորպեսզի յետ մղենք այն հարձակումը, վորը ազգային հանրապետություններում կատարվում է տնտեսական յետամնաց տարրերի կողմից սոցիալիստական տարրերի վրա, պետք է սրել իդեոլոգիական ղեկավարության հարցը, առավելագույն չափով ոգտագործելով բոլոր այն դրականը, ինչ վոր մենք արդեն ունենք այնտեղ: Մեզանում իմ կարծիքով, հիմա նոր քաղաքական տարր է հանդես գալիս, վորը իդեոլոգիական իմաստով կարող է մեզ խոշոր ծառայություն մատուցել քաղաքի, մասնավորապես ազգային, պրոլետարիատի կուլտուրան ազգության գյուղացիության հետ կապելու տեսակետից: Յեթե, ընդհանրապես ասած, քաղաքի և գյուղի մեջ գոյություն ունի հսկայական տարբերություն (այդ շեշտել է դեռ Ենգելսը, ասելով, վոր դա հանդիսանում է սոցիալիզմի հաղթանակը կաշկանդող գործողներից մեկը), ապա դա հատկապես մեծ է ազգային հանրապետություններում: Այն ժամանակ, յերբ քաղաքը յուրացնում է նոր բարձր տեխնիկան՝ գործարաններ և կառուցում տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, արտասահմանյան սարքավորմամբ և այլն, գյուղացին դեռ իր հողը մշակում է փայտե չուծով: Բայց այնտեղ հանդես է գալիս և նոր միջնորդ խավ, վորը կարելի է ոգտագործել գոյական համար նաև կուլտուրայի իմաստով: Մենք ի նկատի ունենք գյուղացիության այն մասը, վորը անցնում է կոլտնտեսության շինարարության, վորը կենտրոնանում է խորհրդային տնտեսություններում: Նա դեռ մեծաքանակ չի, բայց նրա նշանակությունը իբրև ավանգարդի, վոր գործում է կուսակցության ղեկարարությամբ, շատ մեծ է: Իդեոլոգիական իմաստով այդ տարրերը պետք է խոշոր դեր խաղան, և մեր հետագա աշխատանքներում մենք ավելի շատ պետք է հիմնվենք նրանց վրա: Յես այստեղ առանձնապես չեմ ուզում խորանալ գյուղացիական մասնավորապես կոլեկտիվացած գյուղացիության դասակարգային եյություն վիճելի հարցում: Այդ հարցը մեր նյութի մեջ չի մտնում: Յես ուզում եմ միայն ցույց տալ այն նոր սոցիալական խավը, վորը միջանկյալ դիրք է գրավում, միանալով բատրակությանը, գյուղատնտեսական բանվորությանը, ինչպես նաև կուսակցական և կոմսոմոլիստական տարրերին, վորը գործում է ազգության գյուղում՝ ուժեղացնելով մեր պրոլետարական դիրքերը: Հարկավոր է նշել նաև այն

եյական հանգամանքը, վոր տնտեսապես կազմակերպված գեկխանի ամման տենդենցները, կապված են խՍՀՄ ինդուստրացման ամբողջական սիստեմի հետ, այդ հանգամանքը անշուշտ ավելի հաջողությունամբ աուների և գյուղերի լայն մասսաներին կհամախմբի՝ վոչնչացնելու համար տնտեսական յետամնաց ձևերը և նույնիսկ թափառական կենցաղը: Այս միջանկյալ տարրերը քաղաքի պրոլետարական կուլտուրան կկապեն ազգային գյուղին և նշանակալից չափով կձևափոխեն ազգային գյուղի կուլտուրայի բնույթը:

Յես կարծում եմ, վոր մեզանում, մեր ազգային հանրապետությունների խոշոր մասում, շնորհիվ կոլտնտեսության և կոոպերատիվ շինարարության՝ բարենաջող հող է ստեղծվում նման կուլտուրական կապի համար, քանի վոր, մեր ազգային հանրապետություններում կոլտնտեսության շինարարության դարգացման համար կան բավական բարենաջող պայմաններ՝ շնորհիվ ինտենսիվ տեխնիկական կուլտուրաներ մշակելու հնարավորության, և այդ հիման վրա բամբակագործական, խաղողի մշակման, ծխախոտագործական և այլ միություններ կազմակերպելուն: Այդ տեխնիկական կուլտուրաների բնույթը բարենաջող պայմաններ է ստեղծում կոլեկտիվացման համար, մասնավորապես, վոր վերջիններս ավանսավորվում ու ֆինանսավորվում են պետությունից, կապվում են կենտրոնական որգանների հետ և այլն: Այդ տնտեսություններում կամաց-կամաց հրապարակ է գալիս գյուղացիական վորոշ խավ, վորը իր տնտեսությամբ ավելի շատ կապված է քաղաքին, քան գյուղին, ավելի շատ կախված է արդյունաբերությունից, քան գյուղատնտեսությունից: Կրկնում եմ, գյուղացիության այդ խավը, վորին մեզ ավելի հեշտ է մոտենալ, պետք է մեր ազդեցության որոշակիորդ դառնա կուլտուրական հեղափոխության ուղղությամբ: Յես պետք է ասեմ, վոր կուլտուրական հեղափոխության տեղափոխությունը քաղաքից դեպի գյուղ շատ դժվարին մոմենտ է: Գյուղում այդ խնդրում մենք ավելի խոշոր դժվարությունների ենք հանդիպում, քան քաղաքում: Բայց յես կարծում եմ, վոր այն գյուղացիությունը, վորը միացած է կոլտնտեսության մեջ, այն գյուղացիությունը, վորը կապված է կոոպերացիային, վորը ուղղակի ոգնություն է ստանում պրոլետարիատի և խորհրդային իշխանության կողմից, վորը տեսնում է, վոր ինքն ևս հանդիսանում է ղեկավար, իսկ հաճախ մեր սոցիալիստական շինարարության վճռական մասնիկը և վորը համոզվում է, վոր պրոլետարիատի հետ միասին կառուցում է սոցիալիզմ, — ահա հենց գյուղացիության այդ տարրն է, վորը հիմա հանդիսանում է ամենահարմար գործունը պրոլետարիատի ազդեցությունը տարածելու համար գյուղացիական այն խավերում, վորոնցում դեռ մի շարք պատ-

ճառները շնորհիվ պահպանվում են անհատական տնտեսությունը, և վորոնց ներկայումս մոտենալը թեև դժվար է, բայց միաժամանակ անհրաժեշտ է մոտենալ: Միաժամանակ աճում է արդյունաբերությունը, աճում է պրոլետարիատը ի հաշիվ տեղական հիմնական ազգաբնակչության: Այդ պրոլետարիատը ստեղծվում է գյուղացիական տարրերից: Իհարկե, շատ գյուղացիներ յերկար չեն մնա քաղաքում, կգան ու կվերադառնան, բայց այդ գաղթին ել կոժանդակի քաղաքի և գյուղի միջև ձիշտ կուլտուրական կապ հաստատելուն:

Քննելով խորհրդային հանրապետություններում ազգային կուլտուրայի կառուցման հիմնական մոմենտները, պետք է կանգ առնել այնպիսի հսկայական լծակի վրա, ինչպիսին դպրոցն է, վորը արդյունավետ է պիտի հարմարվի նոր ստեղծող հասարակական ձևերին: Հիշում եք, ինչպես Մարքսը գրում էր, վոր «հնդիկները և յեգիպտացիների աշխատանքի բաժանման կոպիտ ձևերը առաջացնում են այդ ժողովուրդների պետության և կրոնի կաստայական ձևեր» (Մարքսի և Ենգելսի արխիվ, հատ. I, էջ 228): Այդպես է դրությունը և արևելյան հանրապետություններում, վորտեղ տնտեսական առաջխաղացման և փոփոխման ձևերը անդրադառնում են կուլտուրական շինարարության վրա, վորն իր սկիզբն է առնում մասսայական դպրոցից: Իրա համար ել մեզ անհրաժեշտ է կանգ առնել թեկուզ առաջիկա տասնամյակում այդ դպրոցների դրություն և հեռանկարների վրա:

Մեր առաջ ներկայումս խնդիր է դրված ազգային ուսյոններում անցկացնել ընդհանուր ուսուցում: Մենք վորոշ ժամանակամիջոց ենք նշանակում նրա համար, վորպեսզի քաղաքում և գյուղում անցնենք ընդհանուր ուսուցման: Մենք դրա համար նշանակում ենք միջին ժամանակամիջոց 32 թվից մինչև 38—29 թիվը: Մենք կարծում ենք, վոր հատկապես այդ ժամանակամիջոցում բոլորը, կամ համարյա բոլոր մեր ազգությունները կանցնեն ընդհանուր ուսուցման: Մենք առավելագույն ժամանակամիջոցը վերցնում ենք 10 տարի, և կարծում ենք, վոր այդ տասնամյակի ընթացքում մեր բոլոր յետաձագ ազգությունները կարող են անցնել ընդհանուր ուսուցման: 10 տարին, թվում է, թե յերկար ժամանակամիջոց չէ, բայց մեր միջազգային լարված պայմաններում ամեն տարին ունի խոշոր նշանակություն և ինչքան շուտ մենք այդ հիմնական նախապայմանը ստեղծենք ազգությունների կուլտուրական հեղափոխության համար, — այսինքն գրադիտությունը, — այնքան մենք ամուր կլինենք: Մեզ անհրաժեշտ է մեր կուլտուրական աշխատանքներում, հատկապես, մեր ուղղորդությունը սրել այդ ուղղությամբ:

Յեա մի քանի որինակներ կբերեմ, թե վորոշ հանրապետություններում մենք ինչ ունենք այդ բնագավառում: Վերջին ամիսների ըն-

թացքում մենք կենտրոնի ազդեցությամբ բաժնում լսեցինք մի շարք գեկուցումներ ազգային հանրապետությունների դպրոցական գործի դրություն մասին: Մենք գեկուցումներ լսեցինք Ուզբեկստանից, Ադրբեջանից, Թաթարստանից, Բելոռուսիայից, Վրաստանից, Ուկրաինայից և այլն: Հասկանալի չէ, վոր ամեն մի ազգային հանրապետություն այդ խնդիրներում ունի բավականին եյական առանձնահատկություններ՝ դպրոցական գործի դրման իմաստով: Մեկ հանրապետություն ավելի յետաձագ է, մյուսը ընդհակառակը նշանակալից չափով առաջ է գնացել: Բայց յես հիմա գլխավորապես կխոսեմ ավելի յետաձագ ազգային հանրապետությունների մասին: Այստեղ հարցը կարելի չէր դնել նույնիսկ այսպես, — կա արդյոք նրանց մոտ ընդհանրապես դպրոց, և յեթե կան դպրոցներ, ապա հանդիսանում են նրանք խորհրդային դպրոցներ՝ այդ խոսքի ամբողջական իմաստով:

Յեա այստեղ պիտի այսպիսի փաստ բերեմ (ձիշտ է, այդ փաստը բնորոշ չէ, բայց բավական ցուցադրական է): Բանից դուրս է գալիս, վոր մեզանում հանրապետություններում կան և այնպիսի ուսուցիչներ, վորոնք կարող են միայն մինչև 200 հաշվել, իսկ թվարանության չորս գործողությունից կարող են կատարել միայն հանում և գումարում: Ուրիշները կարող են հաշվել մինչև 1000, բայց և այնպես միայն կարող են գումարման և հանման գործողությունը կատարել (Յորեղմում և Ուզբեկստանի այլ ուսյոններում): Բժախտաբար սուր անեկդոտ չէ, այլ վերցված է այդ հանրապետության նյութերից, վոր մեկ յերկու տարով հնացել է այժմս: Ինչ վերաբերում է այդ ուսուցիչների քաղաքական գրագիտության, ապա այդ մասին խոսել հարկավոր չէ: Բացի այդ պետք է շեշտել նաև այն, վոր մեզ մոտ վորոշ վայրերում ուսուցիչների 50%-ը ունի միայն տարրական կրթություն: Նրանցից շատերը միայն I աստիճանի դպրոց են վերջացրել՝ այն ել միայն 4 տարի սովորելով, իսկ մի մասն ել միայն լիկ-կայան և վեց ամսվա կամ մի տարվա կուրս է վերջացրել: Այսպիսով նրանք շատ քիչ բանով են բարձր կանգնած իրենց աշակերտներից: Յեա ձեզ հարցնում եմ, ընկերներ, կարելի՞ չէ դպրոցական ուսուցիչ համարել այնպիսի ուսուցիչ, վոր ինքը հազիվ հազ գրագետ է: Սա ցույց է տալիս, թե ենչքան լուրջ կերպով մենք յետ ենք ֆնացել:

Յեթե մենք կանգ առնենք ազգության դպրոցի քաղաքական դրույթի վրա, ապա ուսուցիչների քաղաքական ցածր գրագիտության հետևանքով, ամենատարրական հարցերը չեն լուծվում այնպես, ինչպես հարկն է: Վերցնենք որինակ ինտերնացիոնալիստական դաստիարակության հարցը դպրոցում: Պետք է ասել, վոր այստեղ գործը շատ խղճադի վիճակում է: Բացի այդ, ամենատառաջավոր հանրապետու-

թյուններում՝ դպրոցներում շատ վատ և դժվար հակակրոնական դաստիարակության գործը: Բանից դուրս և գալիս, վոր վոչ մի տեղ հակակրոնական դաստիարակություն չկա, իսկ լավագույն դեպքում տեղի ունի անկրոն դաստիարակություն, վոր կրոնի հարցերում նշանակում և չեզոքություն: Դա ինձ հիշեցնում և Բուենոս Թեյերսի Մեդեմի դրույթը ազգային հարցում, վորը գրում եր.—«Մենք չեզոք ենք այն հարցերի վերաբերյալ, վոր ազգային քաղաքականություն ասպարիզում բնորոշ և բուրժուազիայի համար: Այդ ձևով մենք ժխտում ենք ազգային հարցը, այդ կերպարանքով մենք նրան հերթից դուրս ենք հանում» («Սոց.-դեմ. և Ազգ. հարցը», թ 16): Մինչդեռ գործնականում Բուենոս կատաղի կերպով տանում եր մանր-բուրժուական ազգային քաղաքականություն, բոլորովին չպահպանելով չեզոքություն: Այսպես, կրոնական չեզոքությունը դպրոցում հանգում և նրան, վոր այնտեղ տոնվում են բոլոր կրոնական տոները, աշակերտները յերբեմն և ուսուցիչները կատարում են կրոնական ծեսեր: Բացի այդ պետք և մատնանշել, վոր դպրոցում խոշոր ազդեցություն ունեն նաև ծնողները, վորոնք իրենք կրոնական են, անկուլտուրական և անգրագետ: Այս բոլորը միասին վերցրած վկայում են այն մասին, թե ինչքան վատ, — չնայած վոչ բոլոր վայրերում միատեսակ վատ, — և դժվար խնդիրը այդ հսկայական գործոնում, վորը պետք և ազդի ազգային կուլտուրայի զարգացման վրա: Ինչ վերաբերում և ազգաբնակչությանը դպրոցները ներգրավելու խնդրին, ապա պետք և առել, վոր մի քանի ուսյոններում, այդ ներգրավումը հասնում և միայն 18%-ի, հետևաբար 80%-ից ավելին դպրոցական ցանցից դուրս և մնում: Ամենալավ դեպքում արևելքի դպրոցը ներգրավում և յերեխաների 50%-ը, ըստ վորում այդ տեղի ունի արդեն ավելի առաջավոր հանրապետության մեջ, ինչպես Թաթարստանում: Մեր գլխավոր դժբախտությունը կայանում և նրանում, վոր մեր ազգային հանրապետություններում չկան դպրոցական շենքեր և վոր հարկավոր են հսկայական միջոցներ դպրոցական շինարարության համար: Բացի այդ ազգաբնակչության մեջ դեռ պահպանվել և աղջիկների սովորելու վերաբերյալ նախապաշարմունքը, վորի հետևանքով և աղջիկների խոշոր մեծամասնությունը մնում և անգրագետ: Պարզ և, վոր կանանց խոշոր մասի դպրոց չհաճախելը ավելացնում և առանց այդ ևլ անգրագետների հսկայական տոկոսը:

Այսպես են, մոտավորապես, ընկերներ, ընդհանուր գծերով այն յերևույթները, վորոնք բնորոշ են յետաֆնաց ազգությունների դպրոցների համար: Դրան քաղաքական տեսակետից պետք և ավելացնել և այն, վոր ուսուցիչների շրջանում կոմունիստ-կուսակցականների տո-

կոսը շատ չնչին և,—5—6—7% (այդ տոկոսին վորոշ վայրերում նույն չափով կարելի յե ավելացնել կոմսոմոլիստներին): Դպրոցներում աշակերտություն շատ չնչին չափով և քաղված պիոներական աշխատանքներին: Աշակերտների հետ արտադպրոցական աշխատանք համարյա թե չի տարվում:

Մեր ազգային դպրոցներում կա դարձյալ մի եյական պակասություն, վորը նշանակալից չափով խանգարում և այդ դպրոցների աշխատանքներին. դա կայանում և նրանում, վոր աշակերտության խոշոր մասը չի հասնում մինչև դպրոցի յերրորդ խմբակը, և վոր նրանք մինչև չորսամյա դպրոց ավարտելը չեն դիմանում, իսկ մեծ մասամբ սովորում են մինչև յերկու տարի: Դրան պետք և ավելացնել, վոր նրանք, վորոնք դպրոցում ավելի առաջ են գնում, հանդիպում են այն բանին, վոր մեր ազգային դպրոցներն ավելի քիչ դիտություն են տալիս, քան սովորական դպրոցները, այն պատճառով, վոր աշակերտները շատ ժամանակ են կորցնում լեզուներ սովորելու վրա: Սա ևլ յուրատեսակ պատիժ և յետաֆնացությանը նպաստող: Կան այնպիսի դպրոցներ, — յեթե վերցնենք մի քիչ ավելի աղաղակող մոմենտ,—վորտեղ առաջին աստիճանի դպրոցում անհրաժեշտ և սովորել յերեք, նույնիսկ չորս լեզու: Այսպես, որինակ, տաջիկը Ուզբեկստանում պետք և սովորի իր մայրենի տաջիկերեն լեզուն, սովորի ուզբեկերեն, նրան անհրաժեշտ և սովորել ռուսերեն լեզուն,—իսկ յեթե Տաջիկստանում ապրում և, որինակի համար, հրեյա, նա պետք և սովորի նաև հրեյերեն,—չորս լեզու մի մարդին, վորն առանց դրան ևլ բավական յետաֆնաց և... Մեզ մոտ, Արևմուտքում որինակ, Մոլդավիայում ևլ կան նման որինակներ: Գերմանացին, վորն ապրում և Մոլդավիայում, սովորում և իր գերմաներեն լեզուն, մոլդավերեն, ուկրայներեն և ռուսերեն լեզուն, և բոլորը, կարծես թե, որինական հիմունքներով. նրան հարկավոր և և մայրենի լեզուն, և Մոլդավական հանրապետության լեզուն, վորում նա ապրում և, և այն դաշնակից հանրապետության լեզուն, վորում նա գտնվում և, — ուկրայներենը, և վերջապես, այսպես կոչված՝ Հոկտեմբերյան հեղափոխության լեզուն,— ռուսերենը, վոր բացարձակապես անհրաժեշտ և: Ստացվում և անհավատալի գեր-ծանրաբեռնություն,—տուրք ազգայնության համար, և հատկապես տուրք ազգային փոքրամասնություն լինելու համար: Դա աննորմալ յերևույթ և: Ավելի առաջավոր ժողովուրդներն ևս ուսումնասիրում են մի քանի լեզուներ, բայց ուրիշ ձևով, ուրիշ պայմաններում: Սովորել մի քանի լեզուներ շատ ոգտակար և, բայց արդեն ուսման 7-րդ, 8-րդ տարում, համալսարանում և այլն: Մեզանում ազգային փոքրամասնության համար յերեք լեզուն սովորական յերևույթ և, չխոսելով արդեն յերկու լեզվի

մասին: Վորպեսզի շատ թե քիչ տանելի կերպով սովորել լեզուն, անհրաժեշտ է ամենաքիչը մի տարի սովորել, ուսումնական ժամերի իմաստով: Նշանակում է այն մի քանի տարիներից, վոր սովորողը անց է կացնում դպրոցում պետք է մի ուսումնական տարին հանել: Նա դպրոցում սովորում է չորս տարի և այդ չորս տարուց նա պետք է մի տարի կորցնի լրացուցիչ լեզուն սովորելու վրա: Ռուս աշակերտը այդ ժամանակամիջոցում սովորում է և թվաբանություն, և քաղաքագիտություն, և աշխարհագրություն, իսկ ազգություն աշակերտը պիտի այդ ժամանակը կորցնի լրացուցիչ լեզվի վրա, վորը հաճախ խոշոր կուլտուրական արժեք չի ներկայացնում, և վորը հետամնաց ազգության աշակերտի համար ավելի դժվարացնում է կուլտուրայի յուրացումը:

Սրանից մենք յեզրակացնում ենք, վոր ազգության դպրոցում պետք է յերկարացնել ուսման տևողությունը մեկ տարով, — չորս տարվա փոխարեն՝ 5 տարի: Բայց դա այնքան պարզ ու հեշտ չէ, ինչպես թվում է: Փորձը ցույց է տալիս, վոր աշակերտության մեծամասնությունը չի հասնում մինչև վերջին, չորրորդ տարվան, այլ սովորում է 2—3 տարի. իհարկե ավելի փոքր մասը կհասնի մինչև 5-րդ տարին: Յեւ ահա թե ինչ է ստացվում մեզանում: Մենք դպրոցում հիմնվում ենք դասակարգայնորեն կայուն տարրերի վրա. մեզ անհրաժեշտ է գլխավորապես դպրոց ներգրավել միջակների, չքավորների ու բառարկների յերեխաներին: Սակայն նրանք հնարավորություն չունեն յերեխաներին այդպիսի յերկար ժամանակամիջոցում, ինչպիսին է հինգ տարին, պահել դպրոցում: Մյուս կողմից, շատերի համար գաղտնիք չէ վոր մեր ազգային հանրապետությունների բյուջեն այնքան ուժեղ չէ, իսկ մի տարվա մասսայական ուսուցումը եժան չի նստում: Այդ մոմենտը հարցը բավական դժվարացնում է: Բայց, ընկերներ, յես կարծում եմ, վոր մեզ հարմար ընդհանրապես չեն կարող լինել այնպիսի չարիքներ, վորոնցից մենք չկարողանայիք ջոկել փոքրագույնը: Յերբ վոր հարց է դրվում, — թե քաղաքական իմաստով ինչն է մեզ ավելի փոքրագույն չարիք ներկայանում, ապա յես կարծում եմ, վոր պետք է հաշվի առնել յերկու մոմենտ, — դասակարգային և դաստիարակչական մոմենտ: Չքավորների յերեխաները վոչ մի դեպքում չպետք է յետ մնան ունևոր տարրերի յերեխաներից: Յես կարծում եմ, վոր միակ հնարավոր, — թերևս կարող է պատահել և վոչ ամբողջովին նպատակահարմար, — միջոցը կայանում է այսպես կոչված նեցուկային դպրոցներում: Նեցուկային դպրոցները, — վոչ ամենուրեք, այլ շրջանային ավելի խոշոր կենտրոններում յեղածները, կարող են մտցնել լրացուցիչ տարի: Պետք է աշխատել, վորպեսզի այդ դպրոցներում

յերեխաները ստանան ինտերնատ, վորպեսզի այնտեղ կարողանան սովորել, իրենց ուսումնա ստանան ի հաշիվ պետություն կամ թոգակների և վորպեսզի այնտեղ, այդ նեցուկային դպրոցներում չկարողանան, ընկնել ավելի ունևոր տարրերի յերեխաները:

Յես կարծում եմ, վոր այդ գործի համար պետք է գումար բաց թողնել և համամիութենական միջոցներից, այն հաշվով, վոր լուսավորության գործում պահպանվի դասակարգային գիծը: Միությունը ամբողջությամբ պետք է ավելի յետամնաց հանրապետություններին ոգնություն հասնի կուլտուրական և բյուջետային իմաստով, նրա համար, վորպեսզի նրանք իրենց դպրոցները կարողանան այնպես դնել, վոր առաջիկայում այնտեղ ուսման տևողությունը դառնա հնգամյա, վոր այնտեղ կարողանան սովորել գլխավորապես չքավորների յերեխաները, — ապագայում 9-ամյակներ, տեխնիկոմներ և բարձրագույն ուսումնական հիմնարկներ ստեղծելու հեռանկարներով: Դա ազգային կուլտուրայի հիմնաքարն է:

Ազգային կուլտուրայի զարգացման վրա մեր կարևոր ազդեցություններից մեկը պետք է լինի՝ այդ կուլտուրայի դասակարգային գրույթը: Նա իր բովանդակությամբ պետք է լինի ինտերնացիոնալիստական և պրոլետարական, չնայած նրան, վոր նա ամբապնդվող սոցիալիստականը արտացոլելու հետ միաժամանակ, կարտացոլի նաև մեր կյանքում յեղած մանր-բուրժուական տարրերը: Դպրոցը պետք է պրոլետարիատի դասակարգային պայքարի հզոր զենքի վերածվի: Դա կապահովի ազգային կուլտուրայի առողջ սոցիալիստական զարգացումը: Մենք, ինչ էլ վոր լինի, պետք է հասնենք նրան. վոր դպրոցը փաստորեն դասարարգային պետություն, պրոլետարիատի պետության զենքը դառնա: Հատկապես այդպիսի դասակարգային պրոլետարական դպրոց պետք է ստեղծել գյուղում: Այդ դպրոցը պրոլետարիատի գործունեներից մեկը կդառնա ազդելու գյուղական մասայի վրա: Մենք պետք է հարց դնենք այն մասին, վոր ունենանք կոմունիստ, մարքսիստ ուսուցիչներ, պետք է լավացնել նրանց նյութական ապահովությունը, պետք է ապահովել նույնպես հասակավոր յերեխաներին, կադմակերպել պիոներ-ջոկատներ, պետք է կազմել իդեոլոգիապես կայուն դասագրքեր, վորոնք ամբողջովին պիտի հարմարվեն այդ դպրոցներին, այն հաշվով, վոր նրանք արտացոլեն առանձին ազգային շրջանների բոլոր անհրաժեշտ առանձնահատկությունները: Այդ կոմունիստիկ այն բանին, վոր աշակերտը, սովորելով նման դպրոցում, ավելի լավ պատրաստված կլինի կյանքի համար, կկարողանա ավելի լավ տանել իր տնտեսական գործերը և կառուցել նոր կուլտուրան: Այդ բոլոր միջոցառումներով մենք ազգաբնակչությանը կքաշենք դեպի դպրոցները:

Հիմա մենք յետամնաց հանրապետություններում բոլորովին չենք նկատում ծնողների գանգատն այն մասին, վոր յերեխաները դպրոց չեն հաճախում: Իմ կարծիքով այդ հարցում ազգաբնակչության կողմից վոչ մի ազդու յեղույթ չի յեղել: Յես անձնապես չեմ տեսել վոչ մի պատգամավորութուն, վորը ազգային հանրապետություններից գար այստեղ, կենտրոն ու դիմեր ընկ. Կալինինին այդ հարցի առթիվ: Ընկեր Կալինինի մոտ շատ պատգամավորներ են գալիս: Միայն այնպիսի պատգամավորութուն, վորը գար այստեղ ու ասեր,—մեղանում դպրոց չկա, պետք է բոլոր միջոցները ձեռք առնել դպրոց ստեղծելու համար,—այդպիսի պատգամավորութուն չի յեղել. ընկերներ, այդ մասին շատ են խոսել, բայց առաջավոր ուսյոններում, և վոչ թե յետամնացներում: Յես հիմա ձեզ կըբերեմ մի փաստ. անա թե ինչ են գրում: Դպրոցի ուսուցչուհին գալիս է գյուղ, գնում է գյուղխորհրդի նախագահի մոտ և ասում,—յես յեկել եմ ձեր դպրոցական հասակի յերեխաներին սովորեցնելու: Իսկ նախագահը նրան պատասխանում է. սովորեցրու քո ուսուցչուհին: Ուսուցչուհին հարցնում է,—ինչո՞ւ... Նա պատասխանում է:—անա Ալյոշա Կազովը սովորեց, սովորեց, բայց ի՞նչ դարձավ,—սրիկա: Վասյան սովորեց,—թողեց ծնողներին ու փախավ, վոչ վոք չի իմանում, թե վճռեց և նա գտնվում. սովորեց Վանյան, և ի՞նչ, նա տնտեսությամբ չի զբաղվում, վորսի չի գնում և այլն և այլն (տես «Север. Сборник», էջ 312): Ահա, ընկերներ, թե ազգաբնակչության կողմից ինչպիսի արձագանք է արվում մեր դպրոցների վերաբերյալ: Յես, իհարկե, վերցրի ծայրահեղ որինակ: Ծնողները չեն աշխատում լավացնել դպրոցները: Մենք պետք է ձգտենք նրան, վոր Վասյան կամ Անմեղը գան մեր դպրոցը, և վորպեսզի նրանք այնտեղ սովորեն և սկսու վորսալ, և իրենց տնտեսությունը բարձրացնել, և հասնել նրան, վորպեսզի, որինակ, կովը որեկան յերկու վեզրո կաթ տա և այլն: Մենք պետք է ձգտենք նրան, վորպեսզի դպրոցն ավելի մոտ կանգնի ազգաբնակչությանը: Յերը մենք հասնենք դրան, այն ժամանակ ազգաբնակչությունն ինքը կձգտի դեպի դպրոց: Ահա թե ինչպես է դրվում մեր ազգային հանրապետություններում և շրջաններում դպրոց ստեղծելու հարցը:

Յես կարծում եմ, վոր յեթե մենք այդ դպրոցները իդեոլոգիապես լավ հիմքերի վրա դնենք, ապա մենք կարող ենք այն գործնականորեն ել լավ հիմքերի վրա դնել. քանի վոր իդեոլոգիան և գործնականը միմյանց հետ կապված են: Այդ դեպքում այդ դպրոցները մասսայի վրա ազդելու ամենալավ միջոցներից մեկը կդառնան. բացի այդ ստորին դպրոցից, չե՞ վոր կա նաև քաղաքագիտական դպրոցի մի ամբողջ ցանց, կուսդպրոց, կան ամենատեսակի տեխնիկոմներ և այլ բարձր հիմնարկներ: Յես կարծում

եմ, վոր ժողովրդական լուսավորության այդ ցանցի միջոցով մենք կարող ենք ազդել գյուղում գտնվող ազգային մասսաների վրա: Ներկա նոր պայմաններում, յերը արագանում է սոցիալիստական շինարարության տեմպը քաղաքում և գյուղում,—կավարտվի նաև հեղափոխությունը ազգությունների լուսավորության գործի մեջ, և այն փաստերը, վոր մենք բերինք այստեղ, շուտով կդառնան պատմական անցյալի յերեւոյթներ: Յեթե մենք գիտակցաբար և հմուտ կերպով կարողանանք դեկավարել ազգային կուլտուրայի վրա ազդող բոլոր այն լծակները, վոր կան խորհրդային իշխանության և պրոլետարիատի ձեռքում, ապահովելով այդ կուլտուրայի ճիշտ դրույթը, մենք կարող ենք համոզված լինել, վոր չնայած նրան, վոր մեղանում կան նաև մի շարք բացասական գործոններ, ապա այդ որեկտիվ բացասական գործոնները կարող են վանվել դրական գործոններից, վորոնց յես նույնպես ցույց տվեցի: Հին ազգայնական ինտելիգենցիան կամաց-կամաց փոխարինվում է խորհրդային դաստիարակություն ստացած նոր կադրերով, սոցիալիստական կուլտուրայի աճումը անսայթաք առաջ է գնում, ազգային կուլտուրային բացասական տարրերի տեսակարար կշիռը պակասում է, և նա մեր ուշադիր դեկավարությամբ վեր է ածվում «դեմոկրատական և համաշխարհային բանվորական շարժման կուլտուրայի»: Մենք գնում ենք լենինյան ուղիղ ճանապարհով, հարկավոր է միայն, վոր կուսակցությունը ժամանակին արձագանք տա ազգային կուլտուրայի զարգացման ուղիղ դրույթից շեղվող բոլոր թեքումներին: Պետք է հիշել, վոր դասակարգային թշնամին ամեն կերպ ոգտագործում է մեր շինարարության դժվարությունները, վորը բարդանում է ազգային մոմենտներով: Ձեզանից շատերին այդ հայտնի յե ձեր հանրապետությունների փորձից, ուր կովելով աջ վտանգի դեմ, դուք մոտից հանդիպեցիք բացարձակ ազգայնականության, որինակ, ինչպես ուկրայնական ակադեմիկ Յեֆրեմովի յեղույթը, վոր Խորհրդային իշխանության մասին ասում էր.—«Մեր «պայքարով լեցուն» ժամանակները կդառնան միայն փոքրիկ և աննշան եպիդոդներ, և ընդհանուր ուժերով պետք է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի եպիդոդը շուտով պրավի իր իսկական տեղը»: Ազգայնականի դասակարգային թշնամու վոչ յերկիմաստ խոսքերի կողքին դնենք ուկրայնական կոմունիստ Սոլոգուբի յեղույթը, վոր գրում էր,—«Իդուր չե, վոր Ուկրայինան մի շարք հարյուրամյակների ընթացքում իր անկախության համար մղած պայքարում ունի ամենաուժեղ տիկ պատմութուն. բայց այդ անկախությունը նա չունի և այն ստացավ միայն Հոկտեմբերի մեծ որերին պրոլետարիատի ձեռքից, վորը պայքարում էր իր քաղաքական, տնտեսական ու ազգային շահերի համար...» Յեվ ապա,—«կոմունիստական

կուսակցութեան ուղիղական կազմակերպութիւնը այստեղ հանդես ե գալիս իբրեւ ազգային քաղաքական կուսակցութիւն... Լինել ազգային կուսակցութիւն և ստեղծել ազգային պետութիւն,—գրանու մն ե կոմունիստական կուսակցութեան պարտականութիւնը» (տես ԽՎի- լիայի «Нац. вопрос на Украине», էջ 85): Ուղիղախոսութեամբ պայքարում են այդ տրամադրութիւնների դեմ, բայց դրանք բնորոշ են: Այդպիսի տենդենցները շատ վտանգավոր են. նրանք կտրում են ինտերնացիո- նալիզմի հիմնական կապերը ԽՍՀՄ-յան պրոլետարիատի չարքերում: Սա կուսակցութեան համար խոշոր նախազգուշացումն է: Միաժամանակ չպետք է աչքաթող անել և այն, վոր նախկին հալածված ժողովուրդ- ները շատ բան ստացան պրոլետարական հեղափոխութիւնից, և վոր շատ ժողովուրդների համար համարյա ամբողջ կուլտուրան և կուլտուրա- կան հիմնական ուժերը հանդիսանում են մեծ Հոկտեմբերի ծնունդը: Այդպիսի ազգային կուլտուրան և իր բովանդակութեամբ կլինի հոկ- տոմբերյան, եթէ միայն նա հմտորեն խնամվի:

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Ինչ հարցնում են—«ինչո՞ւ Մարքսը դեմ էր վոչ պատմական ազ- գերի, հատկապես սլավոնների վերածնունդին և ինչո՞ւ մենք այդ հաշվի չենք առնում»: Յես կարծում եմ, վոր հարցը ճիշտ չի դրված. չի կարելի ասել, թէ Մարքսը ընդհանրապես դեմ էր սլավոններին, ինչպես այդ փորձում ե անել Չերնովը իր «Մարքսը և սլավոնները» գրքում. այստեղ հարցը բոլորովին չի վերաբերում ազգային մոմենտ- ներին կամ սլավոնների ազգային գծերին, այլ այն ժամանակվա կոնկրետ պայմաններին, և այն պահանջներին, ինչ հարկավոր էր այն ժամանակաշրջանի հեղափոխութեան շահերի համար: Յես Մարքսից կկարդամ սլավոնների վերաբերյալ մի շատ սուր քաղվածք և դուք կարծում եմ կհամոզվեք, վոր բանը բոլորովին Մարքսի գերմա- նական ազգայնականութեան մեջ չէ: Ահա թէ ինչ ե գրում նա: «Բո- լորովին զարմանալի չէ, վոր Գերմանիայի և Հունգարիայի սլավոնական բոլոր շրջաններում հանդես գալը՝ բազմաթիւ փոք- րաքանակ ազգերի անկախութիւնը վերականգնելու ձգտումով — պանսլավոնական շարժումը ամենուրեք թշնամաբար դիմաւորեց յեվրո- պական հեղափոխական շարժմանը, և վոր սլավոնները բոլորը, ինչպես մի մարդ (բացառութեամբ լեհական դեմոկրատական խավերի) անցան բոնապարտութեան, «յետադիմութեան» կողմը, չնայած վոր, իրենց ասելով, նրանք ևս կովում եյին ազատութեան համար. այդ տեղի- ունեցաւ Գերմանիայում, Հունգարիայում և նույնիսկ Թյուրքիայի վո- րոշ վայրերում: Հանդիսանալով ժողովրդական գործի դավաճաններ, ավստրիական կառավարութեան կամայականութիւնների պահապան ու հենարանը, նրանք իրենք իրենց խայտառակեցին բոլոր հեղափո- խական ազգութիւնների առաջ... Պրագայում, այդ կիսազերմանական քաղաքում, սլավոնական ֆանատիկ բազմութիւնը խանդավառ հանդի- պումներով բացականչում էր «ավելի լավ ե ուսական մտրակը, քան գերմանական ազատութիւնը» («Հեղափոխութիւնը և հակահեղափոխու- թիւնը Գերմանիայում», էջ 99): Դեպի արեւմտյան այդ սլավոններն ունեցած իր դիրքում Մարքսը յելնում էր նրանց առ «ուսական

մորակն» ունեցած կողմնակցությունից, վորը սպառնում եր հեղափոխությունը, այլ վոչ թե դեպի սլավոնները և կամ մի այլ ազգություն ունեցած ատելությունից: Մարքսի «արևմտականությունը» ունի նույն իմաստը, ինչ վոր «վելիկոռուսական հպարտությունը», վորի մասին դուք գիտեք Լենինի նույնանուն հոդվածից:

Կարճ կերպով կպատասխանեմ նաև այն հարցին, թե «1912 թ. ընկ. Ստալինի՝ ինչ է ազգությունը, հարցին տված բնորոշումը մնացել է մինչև այժմ ճիշտ»: Յես կարծում եմ, վոր այդ հարցը մեր պայմաններում ակտուալ նշանակություն չունի: Ռուսաստանի ժողովուրդները իրավունքների գեկլարացիան, խորհրդային իշխանության ազգային քաղաքականության այդ հիմնական փաստաթուղթը, խոսում է վոչ միայն ժողովուրդների իրավահավասարության մասին, այլև ազգային փոքրամասնությունների ու նույնիսկ ցեղական խմբավորումների ազատ զարգացման մասին. այդ զարգացումը կարող է ընթանալ նաև այն ուղղությամբ, վոր զանազան ցեղական խմբավորումներ միավորվեն իբրև ազգություն: Նման պարագաներում տերիտորիալ հատկանիշը մեզանում պարտադիր է, բայց այնուամենայնիվ տվյալ ազգության վարչականորեն առանձնանալու համար հաստատված նվազագույն տոկոսի նորմա գոյություն չունի մեզանում (որինակ Դրեմում 26 %-ն է թաթար): Սովորաբար պահանջվում է 50 %-ից ավելին, բայց ամենուրեք չի պահանջվում: Ազգությունների լեզվի խնդրում ևս մեզանում կան բացառություններ. այսպես, մորդվիններն իրենց հաշվում են մի ընդհանուր ազգություն, բայց միաժամանակ ունեն յերկու լեզու, — երզյու և մոկշա, կամ ցույց տանք լեռնցի և դաշտցի մարիցիներին, վորոնց լեզուն միմիանցից տարբերվում է, կամ մասամբ Վրաստանում քարթվելցիները ու մինգրելցիները միջև, — բայց հիմնականում լեզվի ընդհանրությունը պարտադիր է. ազգությունների մյուս հատկանիշները բղխում են այդ յերկու հիմնական մոմենտներից: Դեռ 1851 թ. Պասկվալե Մանչինին բնորոշել է, վոր «ազգությունը մարդկանց բնական ընկերություն է, յերբ ընդհանուր են նրանց տերրիտորիան, ծագումը, սովորույթները, լեզուն, կյանքին հաղորդակցելուն հարմարվելը և ոսցիալական գիտակցությունը»: Դա արդեն հեռու չէ մեր՝ ազգությունը բնորոշումից: Ա. Դյուրկհեյմը 1915 թ. շատ յուրօրինակ բնորոշում է տալիս ազգությանը, — «Ազգությունը մարդկային խմբավորում է, վորի անդամը ցեղական կամ ուղղակի պատմական հիմունքներով ուղղում է ապրել միևնույն որենքներով, ստեղծել մի պետություն... Քաղաքակրթված ազգությունների շրջանում հիմա ընդհանուր սկզբունք է, վոր այդ ընդհանուր կամքը, — հարգվելու իրավունք է ստանում, — յերբ նա հաս-

տատվում է վճռականորեն... վոր նա պետություն միակ հաստատուն հիմքն է» (տես Միլյուկով «Нац. вопрос», էջ 78). դա բոլորովին վոչ մաքսիստական դրույթ է, բայց բնորոշ է իմպերիալիստական դարաշրջանի համար, վորը առաջին պլանի վրա չէ քաշում ուժի մոմենտը: Ազգային հարցի բնույթը պրոլետարական դիկտատուրայի ժամանակ նշանակալից չափով փոխվում է, դրա հետ միաժամանակ փոխվում է նաև ազգության բնորոշման նշանակությունը: Բայց այդ հարցը իր բոլոր մանրամասնություններով դեռ լավ չի ուսումնասիրված:

Պատասխանում եմ այն հարցին թե «Խորհրդային Միության մեջ ազգային կուլտուրայի զարգացման համար ինչ նշանակություն ունի կապիտալիստական շրջապատը»: Յես կարծում եմ, վոր մեր սոցիալիստական շինարարության համար ել բուրժուական շրջապատը հանդիսանում է բացասական գործոն, վորը արգելք է հանդիսանում մեր զարգացման թափին, բայց այնուամենայնիվ դա հաղթահարելի գործոն է. նույնը է ազգային-կուլտուրական շինարարության հարցում, — շրջապատը դժվարացնում է ազգային-կուլտուրայի զարգացումը և բարդացնում է խնդիրը, այնչափով, վորչափով վոր մի քանի ազգային կուլտուրաներ միևնույն լեզվով ծավալվում է և մեզ մոտ և սահմանից դուրս: Այդպիսի դեպքերում պետք է հատկապես հետևել, վոր նոր կուլտուրան չյենթարկվի դրսի ազգայնական ազդեցությանը. բայց դա տվյալ ազգային հանրապետության կուլտուրայի հիմնական բովանդակությունը չի փոխում: Ըստ յերևույթին, այս հարցն ևս կապված է մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության հետ և վեճը այդ հարցի մասին ունի ընդհանուր սկզբունքային բնույթ: Հիմնական մոմենտը կայանում է նրանում, վոր Խորհրդային իշխանության որոք, յերբ ազգության կամքի փաստական բնորոշիչ գործոնը հանդիսանում է պրոլետարիատը, և դրա հետ միասին տվյալ հանրապետությանը ղեկավարող կոմկուսակցությունը, վորը յենթարկվում է կուսակցության կենտրոնական ղեկավարությանը, — ազգային կուլտուրան իր բովանդակությամբ վոչ մի ընդհանուր բան չունի վորևէ ազգային գաղափարախոսության և կամ ազգության վորևէ միասնական գծերի կամ նրա «եյություն» հետ: Կուլտուրան ազգային է այն չափով, վոր չափով նա ստեղծվում է այդ ազգության կողմից, — համապատասխան նրա բոլոր առանձնահատկություններին և ստեղծվում է վոչ միայն նրա ինտելիգենցիայի կողմից, քանի վոր յես արդեն ասեցի, վոր Խորհրդային իշխանության որոք կուլտուրական ստեղծագործության հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր վոչնչանում է կուլտուրա ստեղծողների կաստան.

այդ վերնաշենքը սկսում է մեռնել ամենքից առաջ՝ հին աշխարհի հատկանիշների մեռնելու հետ միաժամանակ։ Մենք բարձրանում ենք կուլտուրայի ստեղծման բարձրագույն աստիճանը, վորի սիմվոլը յես համարեցի բանգոյլթյթակիցներին (այսինքն քաղաքի և գյուղի մաս-սաներին)։ Ըստ եյուլթյան այդ ազգային կուլտուրան միջազգային է, վորը իՍՄՇՄ-յան մեջ տալիս է ընդհանուր գումարը մեր պրոլետարիատի կուլտուրական շինարարությունը։

Պատասխանում եմ վերջին հարցին, — «համաձայն եմ յես ընկ. Լուպպոլի հարցադրմանը ազգային կուլտուրայի մասին և ընդհանրապես ընդունում եմ ազգությունների ձուլումը»։

Ընկ. Լուպպոլի «Լենինը և փիլիսոփայությունը» գրքում հարցադրումը ազգային կուլտուրայի մասին ունի մի քանի անճշտություններ։ Նա խոստովանում է, վոր ընդհանրապես իՍՄՇՄ-յան մեջ իրար հակառակ կանգնած են յերկու կուլտուրաներ, — ազգային և միջազգային, առաջինը մենք դեն ենք գցում, յերկրորդը պահպանում ենք. նա բացառություն է անում յետաձևաց ազգությունների համար և ասում է հետևյալը. «Իհարկե, գործը դժվարանում է, յերբ մեր առաջ կան հետաձևաց յերկրներ և ժողովուրդներ, վորոնք որդանապես կապված են մի յերկրի հետ, վորը արդեն կապիտալիզմից կոմունիզմ անցնելու ժամանակաշրջանն է ապրում, ուրիշ խոսքով — յետաձևաց կուլտուրա ունեցող, բայց պրոլետարիատի դիկտատուրա հաստատված յերկրը, յերբ նրան ոգնում է ավելի զարգացած յերկիր։ Իր դիկտատուրան իրագործող պրոլետարիատը զգուշությամբ է մոտենում յետաձևաց ազգության կուլտուրային. տվյալ դեպքում խնդիրը կայանում է նրանում, վոր յետաձևաց ազգությունների կուլտուրայի ձևը սնել անցման շրջանի կուլտուրայի բովանդակությամբ» (եջ 252 — 3)։ Ընկ. Լուպպոլի մոտեցումը դիալեկտիկական է։ Յերկուսից մեկը, — կամ մենք ընդունում ենք, վոր ազգային կուլտուրա հասկացողությունը նաև անցման շրջանում մնացել է այնպիսին, ինչպիսին եր նա կապիտալիզմի որոք, — այն ժամանակ մենք ճիշտ կվարվենք ժխտելով այն Միության ավելի առաջավոր մասերի համար, բայց այդ դեպքում ինչո՞ւ համար պահպանել այդ բուրժուական-տերտերական կուլտուրան (քանի վոր այդպես է Լենինի ձևակերպումը ազգային կուլտուրայի մասին) յետաձևաց ազգությունների համար և լրացնել այդ ձևին չհամապատասխանող ու չկապվող բովանդակությամբ։ Յեվ կամ մենք ընդունում ենք, վոր պրոլետարիատի դիկտատուրայի որոք, ամեն մի ազգության ներսում դասակարգային ուժերի բոլորովին այլ փոխհարաբերությունների ժամանակ «ազգային կուլտուրա» հասկացողությունը բոլորովին այլ բան է նշանակում, այն է՝ ի դեմս պրո-

լետարիատի ազգություն կամքը արտահայտող կուլտուրա, — և այն ժամանակ ուրեմն այդ հասկացողությունը պիտի ընդունելի համարել վոչ միայն Միության յետաձևաց մասերի համար։ Յեթե մենք, ըստ Լենինի արտահայտության, ձգտում ենք դեմոկրատիզմի միջազգային կուլտուրային և համաշխարհային բանվորական շարժմանը (XIX հատ. եջ 50) և միաժամանակ համաձայն ենք Լենինի հետ այն բանում, վոր «միջազգային» կուլտուրան ապաազգային է... Վոչ վոր այդպիսի բան չի ասել. վոչ վոր «վոչ լեհական, վոչ հրեյական, վոչ ուսական և այլն «մաքուր» կուլտուրա չի հայտարարել» (նույն տեղ եջ 43), — ապա այդպիսի յերկիրն ավելի շատ իրավունք ունի, քան իՍՄՇՄ-ը, և հատկապես նրա առաջավոր ժողովուրդները, հաշվել իրենց կուլտուրան դեմոկրատական, բանվորական, վորը բովանդակում է անհրաժեշտ տարրերը ազգային կուլտուրայի գումարից միջազգային (և վոչ ապաազգային) կուլտուրա ստեղծելու համար։ Պարզ է, վոր հատկապես հիմա ազգային կուլտուրան այլևս մեկանում մի սարսափելի բան է, այլ պրոլետարիատի միջազգային կուլտուրայի հիմք. պրոլետարիատը ստեղծում է նոր հասարակություն նոր կուլտուրայով, հին հասարակության բոլոր նյութական և կուլտուրական նվաճումների բազայի վրա։ Ուրեմն, ընկ. Լուպպոլը իրավացի է. ազգային կուլտուրայի տերմինը մենք կարող ենք գործադրել իՍՄՇՄ-յան Միության բոլոր ժողովուրդների և վոչ միայն յետաձևացների վերաբերյալ։

Կոմիստերնի ծրագրում, վորն ընդգրկում է բոլոր ազգություններին, — ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ կարգում ենք, — «խորհրդային պետության բոլոր ուժերով և միջոցներով ոժանդակել և ոգնել կապիտալիզմից ազատագրվող ազգությունների ազգային կուլտուրային, — այդ կուլտուրաների բովանդակության պրոլետարական գծի հետևողական զարգացման հետ միաժամանակ» (եջ 59)։ Կոմիստերնի այս ծանրակշիռ վորոշումը միանգամայն պարզորոշ խոսում է բոլոր ազգությունների ազգային կուլտուրայի մասին, վորոնք կազառագրվեն կապիտալիզմից, — անկախ նրանց զարգացման աստիճանից։ Ընկ. Լուպպոլը ճիշտ է իրավաբան ազգային կուլտուրայի զարգացման խնդիրը կապիտալիզմից սոցիալիզմ ընթանալու անցման ժամանակաշրջանում։ Ազգային կուլտուրան ավելի և ավելի կվերածվի սոցիալիստականի այն չափով, ինչ չափով նա կվերացնի բուրժուական կուլտուրայի ժառանգությունը՝ ընդունելով ինչ վոր առողջ է և անհրաժեշտ, ու դեն գցելով բոլոր ավելորդ ու ֆրասակարը, վոր անքակտելի կերպով կապված է այդ կուլտուրայի դասակարգային բնույթի հետ, դրա հետ միասին դեն գցելով նաև ազգային տարրերը, այդ տերմինի հին իմաստով։

Սա բոլորովին չի նշանակում, վոր մենք հակառակ մարքսիզմի՝ ազգերի ձուլման մասին յեղած ուսմունքին՝ նայում ենք ազգությանը իբրև հավիտենական կատեգորիայի: Ընդհանրապես ասած հավիտենական կատեգորիաներ չկան. — ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխվում. այս որևէ ազդեցությունից չեն կարող խուսափել նաև ազգությունները: Հարցը նրանումն է թե այդ պրոցեսը ի՞նչ ետապներ ունի: Կապիտալիզմի ժամանակ ազգությունը բնորոշելու համար հարկավոր էլին շատ կայուն հատկանիշներ, քանի վոր բոլորի՝ բոլորի դեմ մղած պայքարում, և այնպիսի հասարակակարգում, վորը հիմնված է թուլելիքի շահագործելու և ճնշելու վրա, այլ և ազգերի պայքարում, — ամենի ազգություն, վոր կորցնում էր իր մի քանի հիմնական, տերիտորիալ կամ լեզվական և այլ հատկանիշները, անմիջապես ընկնում էր պատմության անողորմ յերկնաքարի տակը, վորը դարձնում էր հալածողի ծանր ու անխնա ձեռքը: Այդպիսի ազգությունները կամ ժողովուրդները, վորոշ ժամանակյա ընդդիմադրությունից և անոգնական մաքառումներից հետո, վոչնչանում էլին՝ թողնելով իրենց յետևից միայն պատմական հետքեր: Կապիտալիզմի որոշ ազգության կայունությունն ավելանում էր, քանի վոր հալածվող ազգերի բուրժուական քաջում էր ազգության պահպանության պայքարի մեջ լայն շրջաններ, յեղնելով իր տնտեսական կարիքներից, բայց դրա փոխարեն ուժեղանում էր հալածող ազգության ճնշումը, վոր ձգտում էր վորքան կարելի յե շուտ կուլ տալ թույլ ազգություններին. վոչնչացնելու վտանգը կանգնած է շատ ազգությունների առաջ, վորոնք կորցնելով իրենց ազգային մի քանի հատկանիշները՝ դատապարտված են կործանման:

Պրոլետարիատը հեղախականորեն վերցնելով իշխանությունը փոխում է ամբողջ հասարակակարգը և կշեռքի թաթից դեն է գցում հալածման բոլոր գործոնները, վոր առաջացել էլին կապիտալիստական շահագործումից, ինչպես նաև ազգային հալածանքներից: Այդ հանգամանքը ամբողջովին փոխում է ազգությունների զարգացման խոտորագիծը, որինակ, կլանող-ազգերը բռնի միջոցներով թույլ ազգերին կլանելու ընդունակությունը կորցնում են, իսկ կլանվող ազգերը ուժեղանում են, վոտքի յեն կանգնում և բոլոր միջոցները ձեռք են առնում, վորպեսզի ապրեն նոր ազգային կյանքով, ոգտագործելով պրոլետարական հեղափոխության տված հնարավորությունները: Այս դեպքում կարելի է յե ասել, վոր ազգությունների ձուլումը մի քայլ յետ է գնում, վոր առաջադիմության փոխարեն յետադիմություն է կատարվում (այսպես են համենայն դեպս մտածում շատ մարդիկ ուսաստյապներից): Հազիվ թե կարիք լինի այս աուդիտորիայում վիճել այդպիսի հայացքների դեմ: Շատ կասկածելի յե այն հառաջադիմություն

նը, վոր կայանում է միապետական մեթոդներով առողջ ազգը բռնի կերպով հաշմանդամ դարձնելում: Մանավանդ վոր բավական հայտնի յե, վոր այդ քաղաքականությունը տանում էր վոչ թե դեպի ազգությունների ձուլում, այլ հավիտենական վեճերի՝ նրանց և բռնապետության միջև. ստեղծում էր սեպարատիզմ. վոչ թե ժողովուրդներն էլին ձուլվում, այլ Ռուսաստանն էր դեպի անկում գնում. ուսականացնելու «հաշտությունների» մասին կարելի յեր խոսել միայն խիստ հարաբերական իմաստով:

Բացի այդ, յեթե, որինակ, մենք անպատկահարմար ենք համարում խոշոր կալվածատիրական առաջավոր տնտեսությունների մանրացումը և հանձնումը գյուղացիներին հեղափոխության շահերի անունով, ապա չի կարելի նպատակահարմար չհամարել առանձին ազգություններին անկախություն տալը, նույնիսկ այնպիսիներին, վորոնք իբրև բացառություն ընթացել են միաձուլման ուղիով, կամ գտնվում են միաձուլման շեմքին, մանավանդ վոր հիմա այդ ազգությունները գնում են պրոլետարիատի յետևից և ստեղծում են իրենց ազգային կուլտուրան միջազգային հիմունքներով:

Պրոլետարական հեղափոխությունից հետո անխուսափելիորեն տեղի յե ունենում ազգության թվի բնական աճումը, ուժեղանում է շերտավորման և հավաքման պրոցեսը: Սակայն պետք է յենթադրել, վոր վորոշ ժամանակից հետո հրապարակ կգան այլ բնույթի գործողություններ. այդ ազգային «շարժումը» սկսում է շփվել այլ, հակառակ և միաժամանակ վճռական գործոնների հետ: Կապիտալիզմի բռնի հալածանքի փոխարեն սկսում և ազդել խոշոր առաջավոր կուլտուրաների ձգողական ուժը, վորը չվարելով վորևէ հարձակողական պայքար ուրիշ ազգերի կուլտուրաների դեմ, միայն իր գոյության փաստով և իր «դիջոլությունը» հանդիսանում է այսպես ասած մշտական գալթակղության առարկան, հնարավորություն է տալիս առանձին անհատների և ամբողջական ազգությունների տիրապետելու նրան: Այդ ուղղությամբ ազգում են նաև տնտեսական գործոնները, վորոնք սոցիալիստական շինարարության զարգացման և տնտեսական բարիքների խոշոր կուտակումով չեն ազդի այնպիսի ուժով, ինչպես ազգում են նրանք հիմա, բայց այնուամենայնիվ վորոշ ազդեցություն կունենան կուլտուրաների լուծման ուղղությամբ:

Պետք է յենթադրել, վոր ազգությունների մոտեցումը, իսկ ապա նաև ձուլումը տեղի կունենա բավական վորոշ և բավական յերկարատև ժամանակամիջոցում հիշեցնելով դեմոկրատիայի զարգացման պրոցեսը, վորը սկսելով բուրժուական դեմոկրատիայից անցնում է մանր-բուրժուական դեմոկրատիայի և ապա վերջանում է պրոլետարական դեմո-

Վրապետյով՝ մինչև այդ հասկացողութեան ամբողջական վոչնչացումը՝ պետութեան մահացման հետ միաժամանակ։ Վորոշ չափով դրան ե նմանվելու նաև ազգութեան ծագման, դարգացման, ուժեղացման, թուլացման և վոչնչացման պրոցեսը։

Միանգամայն պարզ ե, վոր այդ պրոցեսը առաջին հերթին տեղի կունենա միատեղ և միատեսակ տնտեսական ու այլ պայմաններով ապրող ազգութիւնների վերաբերյալ։ Ժամանակի ընթացքում միացնող ուժը ավելի կուժեղանա, քան բաժանող գործոնները։ Սկսվում ե ֆիզիկական միաձուլման պրոցեսը և կուլտուրական փոխազդեցութեան շարկապումը։ Դրա հետ միաժամանակ լեզուների մոտեցման պրոցեսը։ Այդ պրոցեսի հիմնական առանձնահատկութիւնը ի տարբերութիւն կապիտալիզմի ժամանակ տեղի ունեցող միանման պրոցեսների, կայանում ե նրանում, վոր մեկ ազգութիւն մյուսին կուլտալու փոխարեն տեղի յի ունենում միախառնութիւն, փոխադարձ ձուլում, վորը ազգութեան իմաստով տալիս ե ինչ վոր նոր—միասնական ամբողջութիւն, վորը կազմված ե լինելու կամավոր միախառնված մասերից, վորոնցից ամեն մեկը մուծում ե դարերով կուտակած իր հարստութիւնը։ միախառնման պրոցեսը շարունակվում ե, նա ընդգրկում ե արդեն հարևան ժողովուրդներին, վորոնք ապրում են վոչ թե միատեղ, այլ իբրև հարևաններ։ Պետք ե յենթադրել, վոր ավելի հեռավոր ապագայում ազգութիւնների միախառնվելը աճելու յե և վոչ թե պակասելու, դրա հետ միասին կուժեղանա նաև միաձուլման պրոցեսը։ Ժողովուրդների միաձուլման ընթացքը, — վորոնք հազարավոր տարիներէ ընթացքում ապրել են կողք-կողքի առանձին տերիտորիաներում, — տեղի կունենա առաջին ետապից հետո և հասկանալի յե, վոր զանազան ազգութիւնների վերաբերյալ առանձին ձև կստանա։

Յեա կարծում եմ, վոր ցեղական հատկանիշները, վորոնք սկիզբ են առնում տարբեր և քիչ փոփոխման յենթարկվող բնական պայմաններից, ավելի կայուն կմնան, քան շատ թե քիչ արհեստական ազգային հատկանիշները։ Դա, հասկանալի յե, չի նշանակում, թե ցեղական կռիվ տեղի կունենա (վորը սարքում ե հիմա բուրժուազիան դեղին, սև և այլն վտանգի պատրվակով), այլ ուղղակի յերկրի զանազան մասերում մարդկանց ցեղական տարբերութիւնը կարտահայտվի նրանց կուլտուրայի վրա, բայց միաժամանակ մարդկանց մասսայական տեղափոխութիւնը փոխադրութեան ավելի հարմարավոր պայմաններում, ժամանակի ընթացքում կհարթի նաև այդ տարբերութիւնը։

Յեա ուզում եմ վերջացնել միջազգային և ազգային դաստիարակութեան վերաբերյալ հարցերով։ Յեա կսահմանափակվեմ նրանով, ինչ վոր բղխում և միջազգային մոտեցումից՝ ազգային կուլտուրաների զարգաց-

ման հողի վրա։ Մենք պետի թարգմանութիւններ կատարենք մի լեզվից մյուսը։ Խնչո՞ւ ուղբեկերենից չթարգմանել ուկրայիներեն լեզվով, թուրքական գրականութիւնից բելոռուսներեն և այլն։—Իր ամբողջութեամբ մեր առջևն ե կանգնած ազգութիւնների փոխադարձ ճանաչման խնդիրը։ Յեա ինտերնացիոնալ դաստիարակման հարց եմ դնում եքսկուրսիաների, պատգամավորութիւնների և մասսայական հանդիպումների իմաստով։ Ինչո՞ւ ուսուցիչները խմբերով մեկ հանրապետութիւնից մյուսը չգնան, վոր տեսնեն թե ինչպեա ե տարվում ուսումնական գործը մյուս տեղերում։ Ինչո՞ւ չկազմակերպել կանանց պատգամավորութիւններ, վորոնք ոժանդակեն կնոջ ազատագրմանը։ Յեա կարծում եմ, վոր մինչ այժմ մենք միջազգային դաստիարակութեան ասպարիզում (վնչ միայն դպրոց, շինարարութեան մեջ) կազում ենք, չենք անում այն, ինչ վոր մեզ հարկավոր ե անել։ Յեա կարծում եմ, վոր միջազգային դաստիարակութիւնը բոլորովին չի բացասում այն, վոր, որինակ, ամեն մի ազգութիւն կարող ե ունենալ իր ճարտարապետական վոճը։ Յեա միջազգային դաստիարակութեան կողմնակից եմ, բայց միաժամանակ համաձայն եմ, վոր Թյուրքմենստանում հարկավոր են կլոր և վոչ թե քառանկյունի տներ, ինչպեա մեզանումն ե։ Յեա հիշում եմ, յերբ աշխատում ելի Միջին Ասիայում, կիրգիզներին տվեցին ուսական խրճիթներ, նրանք կողքին կառուցեցին իրենց յուրտերը, իսկ խրճիթները չեյին մտնում։ Բայց յեթե կլոր տների կառուցումը կապված ե կրոնական երեմենտների հետ (նմանութիւն մեհետների հետ) կամ ազգային այլ մոմենտների հետ, այդ դեպքում մենք պետք ե պայքարենք նաև այդպիսի ճարտարապետական վոճերի դեմ։

Միջազգային դաստիարակութիւնը, վորը մենք ուզում ենք անցկացնել, չի կայանում բոլոր ազգային դժերը վոչնչացնելու մեջ։ Մեզ միջազգային դաստիարակութիւնը անհրաժեշտ ե քաղաքական իմաստով։ Միջազգային դաստիարակութեան մեջ ամենակարեւորը նա յե, վորպեսզի ժողովուրդները հասկանան, վոր Խորհրդային Միութիւնը նրանց ընդհանուր սոցիալիստական հայրենիքն ե. մեզ հարկավոր ե, վորպեսզի թուրքմենն ել դգա, յերբ ձեծում են բելոռուսին, վորպեսզի ադրբեջանցի թուրքն ել ցավ դգա, յերբ խփում են մոլդավացուն, վորպեսզի ԽՍՀՄ-յան բոլոր ազգութիւնների միջև լինի ամրացած պրոլետարական համերաշխութիւն։ Մեր աշխատանքների ներկա ետալում այդ կարևոր մոմենտումն ե կայանում միջազգային դաստիարակութիւնը։ Ստալինը ճիշտ ասաց կուսակցութեան XII-րդ համագումարում, վոր հիմնական խնդիրը կայանում ե նրանում, վորպեսզի առաջավոր պրոլետարիատի յետևից տանենք ազգութիւնների յետամնաց գլուղացիութիւնը։ Դա այն ե, ինչ վոր մեզ հարկավոր ե հեղափոխու-

թյան շահերի, այդ թվում նաև կուլտուրական հեղափոխության շահերի տեսակետից: Այդ դոգման ձևերը կարող են տարբեր վարիանտներ ստանալ՝ կախված առանձին հանրապետութիւնների յուրահատուկ պայմաններից և վորպեսզի տվյալ հանրապետության մեջ ազգային մոմենտը հանդիսանա վոչ թե ինքնամփոփ, այլ յենթակա մոմենտ, և վոր հիմնականը պետք է հանդիսանա դասակարգային մոմենտը, — հեղափոխության շահերը: Ահա թե ինչու մենք ե հիմնական խնդիրը: Բայց այդ յենթակա մոմենտը ինքնըստինքյան այնքան կարևոր է, վոր դուք չեք կարող այն անտես առնել, յեթե ուզում եք պահպանել ԽՍՀՄ-յան ժողովուրդների ազատ դաշինքի հզորութիւնը: Ազգային մոմենտը պիտի բաժարար չափով հաշվի առնել ու հասկանալ նրա համար, վորպեսզի այն աճելով առողջ հողի վրա, կուսակցության ճիշտ ղեկավարութեամբ հանգեցնի իսկական պրոլետարական ինտերնացիոնալիզմի:





С. ДИМАНШТЕЙН

Национальная культура
и проблемы культурного
строительства в нац.
республиках

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0199851



С. ДИМАНШТЕЙН

**Национальная культура
и проблемы культурного
строительства в нац.
республиках**

На армянском языке

